# Nokia X3-00 Օգտագործողի ուղեցույց

Հրատարակություն 1

# Բովանդակություն

**Անվտանգություն** 4

**Սկսում ենք** 6
Ստեղներ և մասեր 6
SIM քարտ և մարտկոց մտցնելը 7
Հիշաքարտը մտցնելը և հեռացնելը 8
Մարտկոցի լիցքավորումը 9
GSM ալեհավաք 9
Լրասարքեր 10

**Միացնելը** 11
Տեղեկություններ Ձեր սարքի մասին 11
Ցանցային ծառայություններ 12
Մուտքի կոդերը 13
Սարքը միացնելը և անջատելը 13
Սպասման ռեժիմ 14
Նավարկում ընտրացանկերում 16
Ստեղները կողպելը 17
Գործառույթներ՝ առանց SIM քարտի 17
Թռիչքային պրոֆիլ 17

**Աջակցություն և թարմացումներ** 18
Աջակցություն 18
My Nokia 19
Բովանդակության ներլցումը 19
Անհատական համակարգչի միջոցով ծրագրակազմը թարմացնելը 19
Ծրագրակազմի անլար թարմացում 20
Գործարանային պարամետրերը վերականգնելը 21

**Դարձրեք այն Ձեր սարքը** 21
Հիմնական պարամետրեր 21
Անհատականացրեք Ձեր հեռախոսը 23
Միացումները 26
Ցանցային ծառայություն մատուցողի ծառայությունները 30

**Կապի մեջ մնալը** 32
Կանչեր կատարելը 32
Տեքստ և հաղորդագրություններ 35
Փոստ և ակնթարթային հաղորդագրում 40

**Լուսանկարահանում և տեսագրում** 46
Պատկերներ սևեռելը 46
Տեսահոլովակներ տեսագրելը 47
Խցիկի և տեսագրման պարամետրեր 47
Պատկերասրահ 47
Պատկերներ տպելը 49
Հիշաքարտ 49

**Ժամանց** 50
Երաժշտություն լսելը 50
Համացանց 54
Խաղեր և ծրագրեր 57

**Քարտեզներ** 58


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Քարտեզներ ներլցնելը 59
Քարտեզներ և GPS 59
Հավելյալ ծառայություններ 60

**Կազմակերպել 61**
Կոնտակտներ կառավարելը 61
Այցեքարտեր 63
Ամսաթիվ և ժամ 63
Զարթուցիչ 63
Օրացույց 64
Անելիքների ցանկ 64
Նշումներ 64
Հաշվիչ 64
Հետհաշվարկի ժամանակաչափ 64
Վայրկյանաչափ 65

**Կանաչ խորհուրդներ 66**
Խնայեք էներգիան 66
Վերամշակում 66
Իմացեք ավելին 66

**Թվային իրավունքների կառավարում 67**

**Երրորդ կողմի ծրագրեր 67**

**Լրասարքեր 68**

**Մարտկոց 68**
Տեղեկություններ մարտկոցի և լիցքավորիչի վերաբերյալ 68
Nokia մարտկոցի իսկությունը ստուգելու ուղեցույց 69

**Խնամք և սպասարկում 70**
Վերամշակում 70

**Անվտանգության համար լրացուցիչ տեղեկություններ 71**
Մագնիսներ և մագնիսական դաշտեր 71
Փոքր երեխաներ 71
Գործարկման միջավայրը 71
Բժշկական սարքավորումներ 71
Ավտոմեքենաներ 72
Հնարավոր պայթյունավտանգ միջավայրեր 72
Արտակարգ իրավիճակների հեռախոսազանգեր 72
Տեղեկություններ հավաստագրման մասին (SAR) 73

**Ցուցիչ 74**

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

# Անվտանգություն

Ընթերցեք այս պարզ ցուցումները: Դրանց չհետևելը կարող է վտանգավոր կամ անօրինական լինել: Լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք օգտագործողի ուղեցույցն ամբողջությամբ:

## ՍԱՐՔԻ ԱՆՎՏԱՆԳ ՄԻԱՑՈՒՄ



Սարքը մի միացրեք այն դեպքերում, երբ բջջային հեռախոսի օգտագործումը արգելված է, կամ եթե այն կարող է ռադիոխանգարում կամ վտանգ առաջացնել:

## ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ՝ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ



Հետևեք տեղական բոլոր օրենքներին: Ավտոմեքենա վարելիս ձեռքերը միշտ ազատ պահեք՝ այն ղեկավարելու համար: Ավտոմեքենա վարելիս Ձեր առաջնային մտահոգությունը պետք է լինի ճանապարհային անվտանգությունը:

## ՌԱԴԻՈԽԱՆԳԱՐՈՒՄ



Բոլոր անլար սարքերը կարող են ենթարկվել ռադիոխանգարումների ազդեցությանը, ինչն իր հերթին կարող է բացասաբար անդրադառնալ դրանց աշխատանքի վրա:

## ԱՆՋԱՏԵԼ ՍԱՐՔԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ



Պահպանել բոլոր սահմանափակումները: Սարքն անջատեք օդանավերում, բժշկական սարքավորումների, վառելանյութերի, քիմիական նյութերի կամ պայթեցման աշխատանքների մերձակայքում:

## ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ



Այս սարքի տեղադրումը և նորոգումը կարող են կատարվել միայն որակյալ մասնագետների կողմից:

## ԼՐԱՍԱՐՔԵՐ ԵՎ ՄԱՐՏԿՈՑՆԵՐ



Օգտագործեք միայն թույլատրված լրասարքեր և մարտկոցներ: Մի միացրեք անհամատեղելի սարքեր:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## ՋՐԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ



Ձեր սարքը ջրակայուն չէ. այն չոր պահեք:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

# Սկսում ենք

Ծանաչեք Ձեր հեռախոսը, մտցրեք մարտկոցը, SIM քարտը, հիշաքարտը և իմացեք որոշ կարևոր տեղեկատվություն Ձեր հեռախոսի մասին:

## Ստեղներ և մասեր




1 Ականջակալ
2 Երաժշտության ստեղն՝ ցատկել/հետ փաթաթել
3 Երաժշտության ստեղն՝ նվագարկել/դադար տալ
4 Երաժշտության ստեղն՝ ցատկել/առաջ փաթաթել
5 Ձախ և աջ ընտրության ստեղն
6 Կանչի ստեղն
7 Միկրոֆոն
8 Ցուցասարք
9 Navi™ ստեղն (ոլորման ստեղն)
10 Ավարտի/Սնուցման ստեղն
11 Ստեղնախումբ
12 Բարձրախոս




13 Բարձրախոս
14 Nokia ԱՎ միակցիչ (3.5 մմ)
15 Լիցքավորիչի միակցիչ


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

16 Micro USB կաբելի միակցիչ
17 Ձայնի ուժգնության ստեղներ
18 Սևեռման ստեղն
19 Խցիկի ոսպնյակներ
20 Հիշաքարտի անցք
21 Դաստակի փոկանցք

## SIM քարտ և մարտկոց մտցնելը

**Ծանուցում.** Կափարիչները հանելիս հոսանքազրկեք հեռախոսը, զատեք լիցքավորիչը կամ միացված այլ սարքեր: Կափարիչները փոխելիս խուսափեք էլեկտրոնային բաղադրամասերին դիպչելուց: Սարքը միշտ պահեք և օգտագործեք կափարիչները հագցրած վիճակում:

SIM քարտը և դրա հպակները կարող են հեշտությամբ վնասվել քերծվածքներից կամ ճկումից, ուստի անհրաժեշտ է զգույշ լինել քարտը տեղափոխելիս, տեղադրելիս կամ հեռացնելիս:

1 Բացել հետևի կափարիչը և հեռացնել այն: Հեռացնել մարտկոցը:




2 Բացել SIM քարտի սևեռակը: Տեղադրեք SIM քարտը սևեռակի մեջ այնպես, որ շեղ անկյունը ուղղված լինի վար, իսկ կոնտակտային մակերևույթը ուղղված լինի դեպի սարքի կոնտակտները: Փակել SIM քարտի սևեռակը:



3 Ծայրակցել մարտկոցի կոնտակտները և տեղադրել մարտկոցը: Փոխարինել հետևի կափարիչը:




## Հիշաքարտը մտցնելը և հեռացնելը

Օգտագործեք միայն Nokia-ի կողմից այս սարքի համար թույլատրված համատեղելի microSD քարտեր: Nokia-ն օգտագործում է հիշաքարտերի համար հաստատված արդյունաբերական ստանդարտներ, բայց հնարավոր է, որ որոշ ապրանքանշաններ լիովին համատեղելի չլինեն այս սարքի հետ: Անհամատեղելի քարտերը կարող են վնասել քարտն ու սարքը և փչացնել քարտի վրա պահպանված տվյալները:

Ձեր սարքը ապահովում է մինչև 8 ԳԲ հիշողության ծավալ ունեցող microSD քարտեր: Մեկ ֆայլի ծավալը չպետք է գերազանցի 2 ԳԲ:

### Հիշաքարտը մտցնելը




1 Բացել հիշաքարտի անցքի կափարիչը:
2 Տեղադրել քարտը հիշաքարտի անցքի մեջ այնպես, որ կոնտակտային մակերևույթը ուղղված լինի դեպի վար, և սեղմել քարտը, մինչև այն զբաղեցնի իր տեղը:
3 Փակել հիշաքարտի անցքի կափարիչը:

### microSD քարտը հեռացնելը

**Կարևոր է.** Հիշողության քարտը չի կարելի հանել գործողության ընթացքում: Քարտը հանելը կարող է վնասել հիշաքարտն ու սարքը և փչացնել քարտի վրա պահպանված տվյալները:

Հեռախոսի գործարկման ընթացքում հիշաքարտը հնարավոր է հեռացնել կամ փոխարինել՝ առանց սարքն անջատելու:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

1 Համոզվեք, որ որևէ ծրագիր չի օգտագործում հիշաքարտը:
2 Բացել հիշաքարտի անցքի կափարիչը:
3 Կողպեքը զատելու համար թեթև սեղմել հիշաքարտը և հեռացնել քարտը:

## Մարտկոցի լիցքավորումը

Գործարանում մարտկոցը մասամբ լիցքավորվել է: Եթե սարքը ցույց է տալիս, որ մարտկոցը լիցքաթափված է, կատարեք հետևյալ գործողությունները.

1 Լիցքավորիչը միացնել պատի վարդակից:



2 Լիցքավորիչը միացնել սարքին:
3 Երբ սարքը ցույց է տալիս, որ մարտկոցը լրիվ լիցքավորված է, անջատել լիցքավորիչը սարքից, ապա պատի վարդակից:

Հնարավոր է նաև մարտկոցը լիցքավորել USB կաբելով՝ օգտագործելով համակարգչի հոսանքը:

1 Միացնել USB կաբելը համակարգչի USB պորտին և Ձեր սարքին:
2 Երբ մարտկոցը լրիվ լիցքավորվի, անջատել USB կաբելը:

Մարտկոցը լիցքավորելու համար որևէ հստակ ժամանակ սահմանված չէ, իսկ լիցքավորման ժամանակ կարող եք օգտագործել սարքը: Եթե մարտկոցը ամբողջովին լիցքաթափված է, կարող է պահանջվել մի քանի րոպե, մինչև լիցքավորման նշանը հայտնվի ցուցասարքին կամ հնարավոր լինի կանչեր կատարել:

Ռադիո լսելու ժամանակ սարքը լիցքավորելը կարող է ազդել ընդունման որակի վրա:

## GSM ալեհավաք



Ձեր սարքը կարող է ներքին և արտաքին ալեհավաքներ ունենալ: Խուսափեք հաղորդման կամ ընդունման ընթացքում առանց անհրաժեշտության դիպչել ալեհավաքի տիրույթին: Ալեհավաքների հետ հպումը ազդում է հաղորդակցության որակի վրա, ինչը կարող է ավելի շատ սնուցում պահանջել շահագործման ընթացքում և նվազեցնել մարտկոցի ծառայության ժամկետը:

Նկարում պատկերված է ալեհավաքի զբաղեցրած տարածքը, որը նշված է մոխրագույնով:

## Լրասարքեր

### USB կաբել միացնելը



Բացել USB միակցիչի կափարիչը և միացնել USB կաբելը սարքին:

### Ականջակալ

**Ուշադրություն.**
Գլխային հեռախոս օգտագործելը կարող է սահմանափակել արտաքին ձայներ լսելու Ձեր ունակությունը: Գլխային հեռախոսից մի օգտվեք այն դեպքերում, երբ դա կարող է սպառնալիք ստեղծել Ձեր անվտանգության համար:

Սույն սարքի հետ օգտագործելու համար Nokia ԱՎ միակցիչին Nokia-ի կողմից չհաստատագրված այլ արտաքին սարք կամ գլխային հեռախոս միացնելիս հատուկ ուշադրություն դարձրեք ձայնի ուժգնությանը:

Մի միացրեք ելքային ազդանշաններ ստեղծող արտադրատեսակներ, քանի որ դա կարող է վնաս պատճառել սարքին: Nokia ԱՎ միակցիչին լարման որևէ աղբյուր մի միացրեք:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

### Փոկ



Թելել փոկ, ինչպես ցույց է տրված նկարում, և ամուր ձգել:

# Միացնելը

Իմացեք, թե ինչպես է պետք միացնել հեռախոսը և օգտագործել հիմնական գործառույթները:

### Տեղեկություններ Ձեր սարքի մասին

Սույն ուղեցույցում նկարագրված անլար սարքը հավանություն է ստացել GSM 850, 900, 1800 և 1900 ՄՀց ցանցեր-ում օգտագործման համար: Ցանցերի մասին լրացուցիչ տեղեկություն ստանալու համար դիմեք Ձեր ծառայության մատակարարին:

Ձեր սարքը կարող է պարունակել երրորդ անձանց ինտերնետային կայքերին միանալու համար նախապես տեղադրված էջանիշեր ու հղումներ և դեպի երրորդ անձանց կայքեր մուտք գործելու հնարավորություն տալ: Դրանք կապված չեն Nokia-ի հետ, և Nokia-ն դրանց համար որևէ պատասխանատվություն չի ստանձնում: Եթե այդպիսի կայքեր եք մտնում, նախազգուշական միջոցներ ձեռնարկեք անվտանգության կամ դրանց բովանդակության առնչությամբ:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

**Ուշադրություն.**
Սույն սարքի՝ զարթուցիչից բացի այլ ֆունկցիոնալ հնարավորություններից օգտվելու համար անհրաժեշտ է, որ սարքը միացված լինի: Մի միացրեք սարքը, երբ անլար սարքի օգտագործումը կարող է ռադիոխանգարում առաջացնել կամ վտանգ ներկայացնել:

Սույն սարքից օգտվելիս ենթարկվեք բոլոր օրենքներին և հարգեք տեղական սովորույթները, այլոց անձնական կյանքի անձեռնմխելիությունը և օրինական իրավունքները, ներառյալ հեղինակային իրավունքները: Հեղինակային իրավունքի պաշտպանությունը կարող է արգելել որոշ պատկերների, երաժշտության և այլ բովանդակության պատճենումը, փոփոխումը կամ փոխանցումը:

Սարքում պահվող կարևոր բոլոր տեղեկությունների համար ստեղծեք պահեստային պատճեններ կամ դրանք գրի առեք:

Այլ սարքերի միացնելիս կարդացեք դրանց օգտագործման ուղեցույցը՝ անվտանգության վերաբերյալ մանրամասն հրահանգներ ստանալու համար: Մի միացրեք անհամատեղելի սարքեր:

Սույն ուղեցույցում ներկայացված պատկերները կարող են տարբերվել Ձեր սարքի էկրանին ցուցադրվածներից:

Ձեր սարքի մասին այլ կարևոր տեղեկություններ ստանալու համար՝ տե՛ս օգտագործողի ուղեցույցը:

## Ցանցային ծառայություններ

Սարքն օգտագործելու համար Դուք պետք է ծառայություն ստանաք անլար կապի ծառայություններ մատուցողի կողմից: Որոշ գործառական հնարավորություններ մատչելի են ոչ բոլոր ցանցերում, այլ հնարավորություններ կարող են պահանջել, որ Դուք հատուկ պայմանավորվածություն ձեռք բերեք Ձեր ծառայություն մատուցողի հետ՝ դրանցից օգտվելու համար: Ցանցային ծառայությունները ներառում են տվյալների փոխանցում: Ծառայության մատակարարից տեղեկացեք Ձեր տան ցանցում կիրառվող կամ այլ ցանցերում ռոումինգից օգտվելու համար սահմանված վճարների մասին: Ծառայություն մատուցողը կարող է բացատրել, թե ծառայության համար ինչ վճար կգանձվի:

Ձեր ծառայություն մատուցողը կարող է պահանջել, որ սարքի որոշ ֆունկցիոնալ հնարավորություններ անջատվեն կամ չակտիվացվեն: Նման դեպքերում այդ հնարավորությունները չեն երևա Ձեր սարքի հրամանացանկում: Ձեր սարքը կարող է նաև ընտրովի տարրեր ունենալ, ինչպիսիք են ընտրացանկում եղած անվանումները, ընտրացանկի դասավորվածությունն ու պատկերակները:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Մուտքի կոդերը

Նախադրելու համար, թե ինչպես է Ձեր հեռախոսն օգտագործում մուտքի կոդերն ու անվտանգության պարամետրերը, ընտրեք Ընտցնկ > Պարամետրեր > Անվտանգթն > Մուտքի կոդեր:

- Անվտանգության կոդը օգնում է պաշտպանել Ձեր հեռախոսը չլիազորված օգտագործումից: Նախադրված կոդն է 12345-ը: Դուք կարող եք փոխել կոդը և նախադրել, որ հեռախոսը պահանջի այն: Որոշ գործողությունների համար անվտանգության կոդը անհրաժեշտ է՝ անկախ պարամետրերից, օրինակ, եթե ցանկանում եք վերականգնել գործարանային պարամետրերը: Կոդը պահեք գաղտնի՝ Ձեր հեռախոսից առանձին վայրում: Եթե մոռանաք կոդը և Ձեր հեռախոսը արգելափակվի, այն անհրաժեշտ կլինի սպասարկել, ինչի համար կարող է գանձվել լրացուցիչ վարձ: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Nokia Care կենտրոն կամ Ձեր գործակալին:
- SIM (USIM) քարտի հետ տրամադրվող PIN (UPIN) կոդը օգնում է պաշտպանել քարտը չլիազորված օգտագործումից:
- Որոշ SIM (USIM) քարտերի հետ տրամադրվող PIN2 (UPIN2) կոդը պահանջվում է որոշակի ծառայություններ մուտք գործելու համար:
- SIM (USIM) քարտի հետ կարող են տրամադրվել PUK (UPUK) և PUK2 (UPUK2) կոդերը: Եթե PIN կոդը երեք անգամ անընդմեջ սխալ մուտքագրվի, Ձեզանից կպահանջվի մուտքագրել PUK կոդը: Եթե կոդերը տրամադրված չեն, դիմեք Ձեր ծառայություն մատուցողին:
- Արգելող նշանաբառը պահանջվում է կանչի արգելման ծառայությունն օգտագործելու դեպքում՝ Ձեր հեռախոսից և դեպի Ձեր հեռախոս կանչեր կատարելն արգելելու համար (ցանցային ծառայություն):
- Զննիչի անվտանգության մոդուլի պարամետրերը դիտելու կամ փոխելու համար ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Անվտանգթն > Անվտ. մոդուլ պմտ:

## Սարքը միացնելը և անջատելը



**Միացնելը և անջատելը**

Սեղմել և պահել սնուցման ստեղնը:

**Մուտքագրել PIN կոդը**

Անհրաժեշտության դեպքում մուտքագրել PIN կոդը (ցուցադրվում է **** տեսքով):

**Նախադրել ժամանակը և ամսաթիվը**

Անհրաժեշտության դեպքում մուտքագրել ամսաթիվը, տեղական ժամանակը, ժամային գոտին և ամառային ժամանակը՝ Ձեր գտնվելու վայրին համապատասխան:

Երբ առաջին անգամ անջատում եք Ձեր սարքը, Ձեզանից կարող է պահանջվել ստանալ Ձեր ծառայության մատուցողի կազմաձևման պարամետրերը (ցանցային ծառայություն): Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Ձեր ծառայության մատուցողին:

## Սպասման ռեժիմ

Երբ հեռախոսը պատրաստ է օգտագործման և որևէ նիշ մուտքագրած չէ, հեռախոսը սպասման ռեժիմում է:

## Ցուցասարք




1 Բջջային ցանցի ազդանշանի ուժգնությունը
2 Մարտկոցի լիցքավորման վիճակը
3 Ցուցիչներ
4 Ժամացույց
5 Ցանցի անվանում կամ օպերատորի պատկերանշան
6 Ամսաթիվ (միայն եթե Հիմնական էկրանն ապաակտիվացված է)
7 Ցուցասարք
8 Ձախ ընտրության ստեղնի գործառույթ
9 Navi ստեղնի գործառույթ (ոլորման ստեղն)
10 Աջ ընտրության ստեղնի գործառույթ

 © 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Հնարավոր է փոխել ձախ և աջ ընտրության ստեղների գործառույթները: Տե՛ս « Ձախ և աջ ընտրանքի ստեղները » էջ 25:

## Հիմնական էկրան

Հիմնական էկրանը ցուցադրում է այն ընտրյալ հնարավորությունների և տեղեկությունների ցանկը, որոնցից կարող եք օգտվել անմիջականորեն:

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Ցուցասարք > Հիմնական էկրան:

**Հիմնական էկրանն ակտիվացնելը**

Ընտրել Հիմն. էկրանի ռեժիմ:

**Հիմնական էկրանը կազմակերպելը և անհատականացնելը**

Ընտրել Անհատկնցնլ տեսքը:

**Հիմնական էկրանն ակտիվացնելու համար ստեղն ընտրելը**

Ընտրել Հիմն. էկրանի բնլի:

**Հիմնական էկրանում նավարկելը**

Ցանկով նավարկելու համար ոլորել վեր կամ վար և ընտրել Ընտրել, Դիտել, կամ Խմբգրել: Սլաքները նշանակում են, որ կան լրացուցիչ տեղեկություններ:

**Նավարկումը վերջացնելը**

Ընտրել Ելք:

## Դյուրանցումներ

Երբ Ձեր սարքը սպասողական կամ հիմնական էկրանի ռեժիմում է, կարող եք օգտագործել հետևյալ դյուրանցումները:

**Կորսված, ստացված և հավաքված կանչեր**

Սեղմել կանչի ստեղնը: Կանչ կատարելու համար ոլորել մինչև համարը կամ անունը և սեղմել կանչի ստեղնը:

**Ձայնարկիչի գործարկումը**

Սեղմել և պահել 0:

**Դեպի ձայնային փոստարկղի համար կանչ կատարելը**

Սեղմել և պահել 1:

**Որպես դյուրանցում օգտագործել այլ ստեղներ**

Տե՛ս «Համարհավաքի դյուրանցումները» էջ 33:

## Ցուցիչներ

- Կան չընթերցված հաղորդագրություններ:
- Կան չուղարկված, դադարեցված կամ չստացված հաղորդագրություններ:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ստեղնաշարը կողպված է:

Մուտք կանչի կամ տեքստային հաղորդագրության դեպքում սարքը չի զանգում:

Տագնապը նախադրված է:

Սարքը գրանցված է GPRS կամ EGPRS ցանցում:

GPRS կամ EGPRS միացումը բաց է:

GPRS կամ EGPRS միացումը դադարեցված է (սպասում է):

Bluetooth միացնելիությունն ակտիվացված է:

GPS ազդանշանը հասանելի է (անհրաժեշտ է արտաքին GPS ալեհավաք) :

GPS ազդանշանը անհասանելի է (անհրաժեշտ է արտաքին GPS ալեհավաք) :

Եթե ունեք երկու հեռախոսագիծ, ապա երկրորդը զբաղված է:

Բոլոր մուտք կանչերը վերահասցեավորված են դեպի այլ համար:

Կանչերը սահմանափակված են փակ օգտվողների խմբով:

Ներկայումս ակտիվ պրոֆիլը ժամանակավորված է:

Սարքին միացված է ականջակալ:

Սարքը համատեղելի USB կաբելով միացված է այլ սարքի:

## Նավարկում ընտրացանկերում

Հեռախոսում առկա է ընտրացանկեր խմբավորված գործառույթների լայն շարք:

1 Ընտրացանկ մուտք գործելու համար ընտրել **Ընտցնկ**:
2 Ոլորել ընտրացանկով և նշել որևէ ընտրանք (օրինակ՝ **Պարամետրեր**):
3 Եթե նշված ընտրացանկը պարունակում է ենթաընտրացանկեր, ընտրեք դրանցից որևէ մեկը (օրինակ՝ **Կանչ**):
4 Ընտրեք Ձեր նախընտրած պարամետրերը:
5 Ընտրացանկի նախորդ մակարդակ վերադառնալու համար ընտրել **Հետ**:

Ընտրացանկից ելնելու համար ընտրել **Ելք**:

Ընտրացանկի տեսքը փոխելու համար ընտրել **Ընտրք** > **Հիմն. ընցկի տեսք**: Ոլորել աջ և ընտրել առկա ընտրանքներից:

Ընտրացանկը վերադասավորելու համար ընտրել **Ընտրք** > **Կազմակերպել**: Ոլորել դեպի տեղափոխման ենթակա ընտրացանկի տարրը և ընտրել **Տղփխել**: Ոլորել դեպի այն տեղը, ուր ցանկանում եք տեղափոխել ընտրացանկի տարրը և ընտրել **OK**: Փոփոխությունները պահպանելու համար ընտրել **Արված** > **Այո**:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Ստեղները կողպելը

Կողպել ստեղնախումբը՝ պատահական ստեղնահպումից խուսափելու համար:

### Ստեղնախումբը կողպելը

Ընտրել Ընտցնկ և սեղմել * 3.5 վայրկյան:

### Ստեղնախումբը բացելը

Ընտրել Բացել և սեղմել * 1.5 վայրկյան: Անհրաժեշտության դեպքում մուտքագրել կողպեքի կոդը:

### Ստեղնախումբը կողպված լինելու ժամանակ կանչին պատասխանելը

Սեղմել «Կանչ» ստեղնը: Կանչն ավարտելու կամ մերժելու դեպքում ստեղնախումբն ինքնաբար կողպվում է:

Կան նաև այլ հնարավորություններ՝ Ավտոմ ստղնկղպ և Անվտնգ. ստղնկղպ: Տե՛ս «Հեռախոսի պարամետրեր» էջ 21:

Ձեր սարքի մեջ ծրագրված արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնի պաշտոնական հեռախոսահամարով զանգահարելը կարող է հնարավոր լինել, նույնիսկ երբ սարքը կամ ստեղնախումբը կողպված է:

## Գործառույթներ՝ առանց SIM քարտի

Ձեր հեռախոսի որոշ գործառույթներ, ինչպիսիք են Կազմակերպիչի գործառույթները և խաղերը, կարող են օգտագործվել առանց SIM քարտ մտցնելու: Որոշ գործառույթներ, որոնք աղոտ են պատկերված ընտրացանկերում, չեն կարող օգտագործվել:

## Թռիչքային պրոֆիլ

Ծառագայթազգայուն պայմաններում օգտագործել թռիչքային պրոֆիլը՝ ռադիոհաճախության բոլոր գործառույթները ապաակտիվացնելու համար: Այնուամենայնիվ, Ձեզ հասանելի կլինեն օֆլայն խաղերը, օրացույցը և հեռախոսահամարները: Թռիչքային պրոֆիլի ակտիվ ժամանակ ցուցադրվում է ✈:

### Թռիչքային պրոֆիլն ակտիվացնելը

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Պրոֆիլներ > Թռիչք > Ակտիվացնել կամ Անհատակնցնել:

### Թռիչքային պրոֆիլն ապաակտիվացնելը

Ընտրել որևէ այլ պրոֆիլ:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

**Ուշադրություն.**
Սարքը թռիչքային ռեժիմում դրված լինելու դեպքում հնարավոր չէ զանգեր ստանալ կամ կատարել (ներառյալ արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնների հեռախոսահամարներով կատարվող զանգերը), կամ օգտվել բջջային ցանցի ծածկույթ պահանջող այլ փունկցիոնալ հնարավորություններից: Զանգահարելու համար նախապես հարկավոր է ակտիվացնել հեռախոսի փունկցիան՝ աշխատանքի ռեժիմը փոխելու միջոցով: Եթե սարքն արգելափակված է, մուտքագրեք արգելափակման ծածկագիրը:

Եթե սարքն արգելափակված է ու գտնվում է թռիչքային ռեժիմում և արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոն զանգահարելու անհրաժեշտություն կա, կարող եք սարքի մեջ ծրագրված արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնի պաշտոնական հեռախոսահամարը մուտքագրել արգելափակման ծածկագրի դաշտում և ընտրել «Զանգել»: Սարքը կհաստատի, որ դուրս եք գալիս թռիչքային ռեժիմից՝ արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոն զանգահարելու համար:

# Աջակցություն և թարմացումներ

Nokia-ն բազմաթիվ եղանակներով օգնում է, որ սարքը առավել օգտակար լինի Ձեզ:

Ձեր սարքի մոդելի համարը կարող եք տեսնել սարքի հետևի կափարիչի վրա:

## Աջակցություն

Եթե ցանկանում եք ավելի լավ իմանալ, թե ինչպես պետք է օգտագործել Ձեր սարքը կամ համոզված չեք, թե ինչպես այն պետք է աշխատի, տեղեկացեք օգտվողի ուղեցույցից կամ այցելեք աջակցության էջերը հետևյալ հասցեով՝ www.nokia.com/support կամ Nokia տեղական կայքէջը, կամ շարժական սարքից՝ www.nokia.mobi/support:

Եթե դա չի լուծել Ձեր խնդիրը, կատարեք հետևյալ գործողությունները.

- Վերագործարկեք սարքը՝ անջատեք սարքը և հեռացրեք մարտկոցը: Մոտ մեկ րոպե անց փոխարինեք մարտկոցը և միացրեք սարքը:
- Վերականգնեք գործարանային սկզբնական պարամետրերն այնպես, ինչպես ներկայացված է օգտագործողի ուղեցույցում:
- Լավագույն աշխատանքի և, հավանաբար, նոր հնարավորություններ ստանալու համար կանոնավոր կերպով թարմացրեք

 © 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

սարքի ծրագրակազմը, ինչպես ներկայացված է օգտագործողի ուղեցույցում:

Եթե Ձեր խնդիրը դեռ չի լուծվել, դիմեք Nokia-ին՝ վերանորոգման ընտրանքների մասին տեղեկանալու համար: Տե՛ս www.nokia.com/repair: Սարքը վերանորոգման ուղարկելուց առաջ միշտ ստեղծեք Ձեր սարքում առկա տվյալների կրկնօրինակը:

## My Nokia

Ստացեք անվճար խորհուրդներ, հնարքներ և աջակցություն Ձեր Nokia հեռախոսի համար, նաև՝ անվճար փորձնական բովանդակություն, փոխգործուն ցուցադրություններ, անհատականացված ցանցէջ և նորություններ Nokia-ի ամենավերջին արտադրանքների ու ծառայությունների մասին:

Քաղե՛ք առավելագույնը Ձեր Nokia հեռախոսից և հենց այսօ՛ր գրանցվեք My Nokia ծառայությանը: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և Ձեր տարածաշրջանում ծառայության մատչելիությունը պարզելու համար տե՛ս www.nokia.com/mynokia:

### Բովանդակության ներլցումը

Հնարավոր է, որ Ձեր հեռախոսու կկարողանաք ներլցնել նոր բովանդակություն (օրինակ՝ թեմաներ) (ցանցային ծառայություն):

**Կարևոր է.** Օգտվեք միայն այն ծառայություններից, որոնց վստահում եք և որոնք ապահովում են համապատասխան անվտանգություն և պաշտպանություն վնասակար ծրագրերից:

Տարբեր ծառայությունների ու սակագների առկայությունը պարզելու համար դիմել ծառայություն մատուցողին:

### Անհատական համակարգչի միջոցով ծրագրակազմը թարմացնելը

Nokia Software Updater-ը համակարգչային ծրագիր է, որը հնարավորություն է տալիս թարմացնել Ձեր սարքի ծրագրակազմը: Ձեր սարքի ծրագրակազմը թարմացնելու համար անհրաժեշտ է համատեղելի համակարգիչ, լայնաշերտ ինտերնետ կապի առկայություն և Ձեր սարքը համակարգչին միացնելու համար տվյալների փոխանցման համատեղելի USB կաբել:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ծրագրակազմի վերջին տարբերակների թողարկման մասին տեղեկանալու և Nokia Software Updater ծրագիրը ներբեռնելու համար այցելեք www.nokia.com/softwareupdate կամ Nokia տեղական կայքէջը:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Սարքի ծրագրակազմը թարմացնելու համար կատարեք հետևյալ քայլերը՝

1 Ներլցրեք և տեղադրեք Nokia Software Updater ծրագիրը Ձեր համակարգչում:
2 Միացնել սարքը համակարգչին՝ օգտագործելով USB տվյալների կաբել, և ընտրել PC Suite:
3 Բացել Nokia Software Updater ծրագիրը: Nokia Software Updater ծրագիրը ուղղորդում է փայլերը կրկնօրինակելու, ծրագրակազմը թարմացնելու և փայլերը վերականգնելու հարցերում:

## Ծրագրակազմի անլար թարմացում

Ծառայությունը մատուցողը ծրագրակազմի թարմացումները կարող է անլար ուղարկել անմիջապես դեպի Ձեր հեռախոս (ցանցային ծառայություն): Այս ընտրանքը կարող է առկա չլինել՝ Ձեր հեռախոսից կախված:

Ծրագրակազմերի թարմացումների ներլցումը կարող է պահանջել մեծ քանակությամբ տվյալների փոխանցում (ցանցային ծառայություն):

Թարմացման ներլցումը սկսելուց առաջ հավաստիացեք, որ սարքի մարտկոցը բավարար չափով լիցքավորված է, կամ միացրեք լիցքավորիչը:

**Ուշադրություն.**
Ծրագրակազմի թարմացում տեղադրելիս, քանի դեռ տեղադրումն ավարտված չէ և սարքը վերագործարկված չէ, Դուք սարքը չեք կարող օգտագործել նույնիսկ արտակարգ իրավիճակների կանչեր կատարելու համար: Նախքան ծրագրերը թարմացնելը՝ անպայման պահեստավորեք տվյալները:

### Ծրագրակազմի թարմացման պարամետրերը

Այս ընտրանքը կարող է առկա չլինել՝ Ձեր հեռախոսից կախված:

Ծրագրակազմի և կազմաձևման թարմացումները թույլատրելու կամ արգելելու համար ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Կազմաձև > Սարքի կովրչի պմտ > Ծառ. ծրգկզմի թրմց:

### Ծրագրակազմի թարմացում հայցելը

1 Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Հեռախոս > Հեռ. թարմացումներ ՝ Ձեր ծառայությունը մատուցողից ծրագրակազմի թարմացումներ հայցելու համար:
2 Ընտրել Ընթ. ծրգկզմ տվյլնր ՝ ծրագրակազմի ներկայիս տարբերակը և թարմացման անհրաժեշտությունը ստուգելու համար:
3 Ընտրել Ներլցն. հեռ. ծրգկզմ ՝ ծրագրակազմի թարմացումը ներլցնելու և

 © 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

տեղադրելու համար: Հետևել ցուցասարքի վրա տրված հրահանգներին:

4 Ներլցնելուց հետո տեղադրումը դադարեցնելու դեպքում ընտրել **Տեղադ. ծզկզմ թրմցմ** ՝ տեղադրումը սկսելու համար:

Ծրագրակազմի թարմացումը կարող է տևել մի քանի րոպե: Տեղադրման հետ խնդիրների ունենալու դեպքում դիմեք Ձեր ծառայությունը մատուցողին:

## Գործարանային պարամետրերը վերականգնելը

Հեռախոսի գործարանային պարամետրերը վերականգնելու համար ընտրել **Ընտցնկ** > **Պարամետրեր** > **Վրկզ. գրծրն պմ** և որևէ մեկը հետևյալից.

**Վրկնգնլ միայն պմտ** — Հետադարձեք բոլոր նախապատվությունների պարամետրերն՝ առանց անձնական տվյալների վերացման:

**Վերականգնլ բոլորը** — Հետադարձեք բոլոր նախապատվությունների պարամետրերը և վերացրեք բոլոր անձնական տվյալները, ինչպիսիք են կոնտակտները, հաղորդագրությունները, մեդիա ֆայլերը և ակտիվացման բանալիները:

# Դարձրեք այն Ձեր սարքը

Նախադրեք Ձեր սարքը, անհատականացրեք այն և միացրեք մի քանի եղանակով:

## Հիմնական պարամետրեր

### Հեռախոսի պարամետրեր

Ընտրել **Ընտցնկ** > **Պարամետրեր** և **Հեռախոս**:

Ընտրել որևէ մեկը հետևյալից.

**Լեզվի պարամետրեր** — Սարքի լեզուն նախադրելու համար ընտրել **Հեռախոսի լեզուն** և որևէ լեզու: SIM քարտում պարունակվող տեղեկությունների համաձայն սարքի լեզուն նախադրելու համար ընտրել **Հեռախոսի լեզուն** > **Ինքնաբար**:

**Հիշ. կարգավիճակ** — Դիտել հիշողության օգտագործումը

**Ավտոմ ստղնկղպ** — Ստեղնախումբը ինքնաբար կողպվում է, եթե նախադրված ժամանակի ընթացքում սարքը սպասման ռեժիմում է, և որևէ գործառույթ չի օգտագործվում:

**Անվտնգ. ստղնկղպ** — Նախադրել, որպեսզի ստեղնախումբը բացելու համար սարքը պահանջի անվտանգության կոդը:

**Ձայնի ճանաչում** — Նախադրել ձայնային հրամաններ կամ սկսել ձայնի ճանաչման վարժանքը:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

**Թույլի հարցում** — Նախադրել, որպեսզի սարքը միացման ժամանակ կատարի թույլային պրոֆիլի հարցում: Թույլային պրոֆիլում ամբողջ ռադիոկապն անջատվում է:

**Հեռ. թարմացումներ** — Թույլատրել ծառայության մատակարարից ծրագրակազմի թարմացումներ ստանալը (ցանցային ծառայություն): Հասանելի ընտրանքները կարող են տարբերվել:

**Օպերատ. ընտրությն** — Ձեռքով ընտրել օգտագործման ենթակա ցանցը:

**Օգն. տեքստ ակտվցմ** — Նախադրել, որպեսզի սարքը ցուցադրի ցուցասարքի օգնության տեքստը .

**Գործարկ. հնչերանգ** — Հեռախոսը միացնելու ժամանակ հնչերանգ նվագարկելը .

**Հաստ. SIM գործողները** — SIM քարտից մուտք գործել ցանցի լրացուցիչ ծառայություն: Այս ընտրանքը կարող է հասանելի չլինել՝ կախված SIM քարտից:

## Անվտանգության պարամետրեր

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր և Անվտանգթն:

Ձեր սարքի մեջ ծրագրված արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնի պաշտոնական հեռախոսահամարով զանգահարելը կարող է հնարավոր լինել, նույնիսկ երբ օգտագործվում են զանգահարելու հնարավորությունը սահմանափակող անվտանգության միջոցներ (ինչպիսիք են հեռախոսազանգերի արգելքը, միայն որոշակի համարներով զանգահարելու սահմանափակումը, միայն օգտագործողների սահմանափակ խմբի անդամներին զանգելու սահմանափակումը): Կանչերի արգելափակումը և վերահասցեավորումը չեն կարող ակտիվ լինել միաժամանակ:

Ընտրել որևէ մեկը հետևյալից.

**PIN կոդի հարցում** կամ **UPIN կոդի հարցում** — Նախադրել, որպեսզի սարքը միացման ժամանակ միշտ կատարի PIN կամ UPIN կոդերի հարցում: Որոշ SIM քարտեր չեն թույլատրում ապաակտիվացնել կոդի հարցումը:

**Կանչի արգելմ. ծոթն** — Արգելել դեպի սարք կատարվող մուտք և սարքից կատարվող ելից կանչերը (ցանցային ծառայություն): Անհրաժեշտ է արգելող նշանաբառ:

**Ամրագրված հմրհվք** — Արգելել հեռախոսից դեպի ընտրյալ հեռախոսահամարներ ելից կանչեր կատարելը, եթե SIM քարտը դա պահովում է: Երբ միացված է ամրագրված համարահավաքը, GPRS միացումն անհնար է բացի այն դեպքերից, երբ GPRS միացումով ուղարկվում են տեքստային հաղորդագրություններ: Այս դեպքում հասցեատիրոջ և հաղորդագրությունների կենտրոնի հեռախոսահամարները պետք է


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ներառված լինեն ամրագրված համարահավաքի ցանկում:

**Փակ օգտ. խումբ** — Որոշել մարդկանց խումբ, ում հեռախոսահամարին հնարավոր է կանչ կատարել, և ովքեր կարող են զանգահարել Ձեզ (ցանցային ծառայություն):

**Անվտնգ. աստիճան** — Ամեն անգամ սարքում նոր SIM քարտ տեղադրելուց հետո անվտանգության կոդի հարցում կատարելու համար ընտրել **Հեռախոս**:

**Մուտքի կոդեր** — Փոխել անվտանգության, PIN, UPIN, PIN2 կոդերը կամ արգելող նշանաբառը:

**PIN2 կոդի հարցում** — Նախադրել, որ կատարվի PIN2 կոդի հարցում՝ PIN2 կոդով պաշտպանված սարքի հատուկ հնարավորություններն օգտագործելու դեպքում: Որոշ SIM քարտեր չեն թույլատրում ապաակտիվացնել կոդի հարցումը: Այս ընտրանքը կարող է հասանելի չլինել՝ կախված SIM քարտից: Մանրամասների մասին տեղեկանալու համար դիմեք ծառայության մատակարարին:

**Կոդը գործ. մեջ է** — Ցուցադրել և ընտրել օգտագործման համար նախատեսված PIN կոդը:

**Լիազոր. վկայագրեր** կամ **Օգտղի վկայականնր** — Դիտել սարքում առկա լիազորման կամ օգտագործողի վկայականների ցանկը:

**Անվտ. հմկրգի պմտ** — Դիտել Անվտ. հմկրգ տվյլնր, ակտիվացնել Հմկրգի PIN-ի պհնջ կամ փոխել մոդուլի PIN-ը և մուտքի PIN-ը:

## Անհատականացրեք Ձեր հեռախոսը

Անհատականության երանգ հաղորդեք Ձեր հեռախոսին՝ օգտագործելով հնչերանգներ, ցուցասարքի ֆոնային պատկերներ և թեմաներ: Ձեր նախընտրած հնարավորությունների համար ավելացրեք դյուրանցումներ և կցեք լրացուցիչ սարքեր:

## Պրոֆիլներ

Ձեր հեռախոսն ունի զանազան պարամետրերի՝ պրոֆիլներ կոչվող խմբեր, որոնք կարող եք ընտրակայել տարբեր իրադարձությունների և միջավայրերի համար նախատեսված զանգերի ազդանշաններով:

Ընտրել **Ընտցնկ** > **Պարամետրեր** > **Պրոֆիլներ**, ցանկալի պրոֆիլը և հետևյալ ընտրանքներից մեկը.

**Ակտիվացնել** — ընտրված պրոֆիլն ակտիվացնելու համար:

**Անհատակնցնել** — պրոֆիլի պարամետրերը փոխելու համար:

**Ժամանակավրվծ** — պրոֆիլի ակտիվ լինելը որոշ ժամանակով նախադրելու համար: Երբ պրոֆիլի համար նախադրված ժամանակը սպառվում է, ակտիվանում է նախորդ պրոֆիլը,

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

որի վրա ժամանակի սահմանափակում դրված չի եղել:

## Թեմաներ

Թեման պարունակում է հեռախոսն անհատականացնելու տարրեր:

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Թեմաներ և հետևյալ ընտրանքներից.

**Ընտրել թեմա** — Բացել Թեմաներ պահոցը և ընտրել որևէ թեմա:

**Թեմայի նրլցմներ** — Ավելի շատ թեմաներ ներլցնելու համար բացեք հղումների ցանկը:

## Հնչերանգներ

Դուք կարող եք փոխել ընտրված ակտիվ պրոֆիլի հնչերանգների պարամետրերը:

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Հնչերանգներ: Դուք կարող եք նույն պարամետրերը գտնել Պրոֆիլներ ընտրացանկում:

## Լույսեր

Հեռախոսի տարբեր գործառույթների հետ փոխկապակցված լուսային էֆեկտներն ակտիվացնելու կամ ապաակտիվացնելու համար ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Լույսեր:

## Ցուցասարք

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Ցուցասարք և հետևյալ ընտրանքներից.

**Պաստառ** — հիմնական էկրանի ռեժիմին ֆոնային պատկեր ավելացնելու համար:

**Հիմնական էկրան** — հիմնական էկրանի ռեժիմը ակտիվացնելու, կազմակերպելու և անհատականացնելու համար:

**Հիմն. էկ. տառի գույն** — հիմնական էկրանի ռեժիմին տառատեսակի գույնն ընտրելու համար:

**Տեղ. ստղ. պտկրկնր** — հիմնական էկրանի ռեժիմում ոլորման պատկերակները ցուցադրելու համար:

**Ծանուցմ. տվյալներ** — կորսված կանչերի և հաղորդագրությունների ծանուցումներում մանրամասներ ցուցադրելու համար:

**Սլայդի շրժպտկրում** — սահող հեռախոսը բացելուց կամ փակելուց անիմացիան ցուցադրելու համար:

**Էկրանի պահպանիչ** — էկրանի պահպանիչ ստեղծելու և նախադրելու համար:

**Տառաչափ** — հաղորդագրությունների փոխանակման, կոնտակտների և ցանցէջերի համար տառաչափ ընտրելու համար:

**Օպերատ. պտկրնշն** — օպերատորի պատկերանշանը ցուցադրելու համար:

**Բջջի տվյ. ցուցդրում** — ցանցում առկա լինելու դեպքում՝ բջջի ինկությունը ցուցադրելու համար:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Իմ դյուրանցումներ

Անհատական դյուրանցումներով կարող եք արագ մուտք գործել դեպի հեռախոսի հաճախակի օգտագործվող գործառույթները:

### Ձախ և աջ ընտրանքի ստեղները

Ընտրանքի ձախ ստեղնին վերագրված գործառույթը փոխելու համար ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Իմ դյուրանցմնր > Ձախ ընտ. ստեղն կամ Աջ ընտր. ստեղն, և համապատասխան գործառույթը:

Հիմնական էկրանի ռեժիմում եթե ընտրանքի ձախ ստեղնն է Գնալ, գործառույթ ակտիվացնելու համար ընտրել Գնալ > Ընտրք և հետևյալ ընտրանքներից.

**Ընտ. ընտրնքներ** — գործառույթ ավելացնելու կամ հեռացնելու համար:

**Կազմակերպել** — գործառույթները վերադասավորելու համար:

### Այլ դյուրանցումներ

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Իմ դյուրանցմնր և հետևյալ ընտրանքներից.

**Նավարկման ստեղն** — նավարկման (ոլորման) ստեղներին կանխորոշված ցանկից այլ գործառույթներ վերագրելու համար:

**Հիմն. էկրանի բնլի** — հիմնական էկրանն ակտիվացնող նավարկման ստեղնի շարժումն ընտրելու համար:

## Համարհավաքի դյուրանցումներ վերագրելը

Ստեղծեք դյուրանցումներ՝ վերագրելով հեռախոսահամարներ 2-9 թվային ստեղներին:

1 Ընտրել Ընտցնկ > Կոնտակտներ > Արագ հավաքում, և ոլորել դեպի թվային ստեղն:
2 Ընտրել Վերագր, կամ, եթե ստեղնին արդեն վերագրված է համար, ընտրել Ընտրք > Փոխել:
3 Մուտքագրել համար կամ որոնել կոնտակտ:

## Ձայնային հրամաններ

Ձայնային հրամանները կարող եք օգտագործել կանչեր կատարելու, ծրագրեր գործարկելու և պրոֆիլներ ակտիվացնելու համար: Ձայնային հրամանները պետք է համապատասխանեն օգտագործվող լեզվին:

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր և Հեռախոս:

## Լեզուն նախադրելը

Ընտրել Լեզվի պարամետրեր > Հեռախոսի լեզուն և լեզուն:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

### Սարքի ձայնի ճանաչումը Ձեր ձայնին վարժեցնելը

Ընտրել Ձայնի ճանաչում > Ձայնի ճնչմն վրժնք:

### Գործառույթի համար ձայնային հրաման ակտիվացնելը

Ընտրել Ձայնի ճանաչում > Ձայն. հրամաններ, հնարավորություն և գործառույթը: նշում է, որ ձայնային հրամանն ակտիվացված է: Եթե ցուցադրված չէ, ընտրել Ավլցնլ:

### Ակտիվացված ձայնային հրամանը վերարտադրելը

Ընտրել Նվագել:

### Ձայնային հրաման վերանվանելը կամ ապաակտիվացնելը

Ոլորել դեպի գործառույթ և ընտրել Ընտրք > Խմբագրել կամ Հեռացնել:

### Բոլոր ձայնային հրամաններն ակտիվացնելը կամ ապաակտիվացնելը

Ընտրել Ընտրք > Ավելացնել բոլորը կամ Հեռացնել բոլորը:

## Միացումները

Ձեր հեռախոսը տրամադրում է տվյալներ փոխանցելու և ստանալու նպատակով այլ սարքերի միանալու մի քանի հնարավորություն:

### Bluetooth անլար տեխնոլոգիա

Bluetooth տեխնոլոգիան թույլ է տալիս Ձեր սարքը ռադիոալիքների միջոցով միացնել համատեղելի Bluetooth սարքի՝ 10 մետր (32 ոտնաչափ) շառավղով:

Սույն սարքը բավարարում է Bluetooth 2.1 + EDR հատկորոշմանը, որն ապահովում է հետևյալ պրոֆիլները. SIM մուտք, հեռախոսագրքի մուտք, օբյեկտի հրում, ֆայլերի փոխանցում, ականջակալ, ձեռնազատ, ընդհանուր մուտք, հաջորդական պորտ, օբյեկտների ընդհանուր փոխանակում, ձայնի առաջատար բաշխում, ձայնի և տեսանյութերի հեռահար կառավարում, ծառայության հայտնաբերման ծրագիր, անհատական տարածքի ցանցային ռեժիմ և ձայնի և տեսանյութերի ընդհանուր բաշխում: Bluetooth տեխնոլոգիայով աշխատող այլ սարքերի հետ փոխհամատեղելիությունն ապահովելու համար օգտագործեք միայն Nokia-ի կողմից այս մոդելի համար թույլատրված լրասարքեր: Սույն սարքի հետ այլ սարքերի համատեղելիությունը պարզելու համար դիմեք այդ սարքերն արտադրողներին:

Bluetooth տեխնոլոգիաների կիրարկմամբ գործող ֆունկցիոնալ հնարավորությունները մարտկոցից ավելի շատ սնուցում են պահանջում, ինչը նվազեցնում է մարտկոցի կյանքը:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Երբ անլար սարքը գտնվում է հեռակառավարման SIM ռեժիմում, զանգահարելու կամ հեռախոսազանգեր ստանալու համար Դուք կարող եք օգտագործել միայն համատեղելի լրասարքեր, օրինակ՝ ավտոմեքենայի համար նախատեսված սարքեր:

Այս ռեժիմում Ձեր անլար սարքից հնարավոր չի լինի կատարել որևէ զանգ՝ բացառությամբ դրանում ծրագրված արտակարգ իրավիճակների համարով զանգերի:

Կանչեր կատարելու համար դուք պետք է նախ դուրս գաք հեռավոր SIM ռեժիմից: Եթե սարքը արգելափակված է, նախ մուտքագրեք արգելափակման ծածկագիրը՝ սարքն արգելափակումից հանելու համար:

### Բացել Bluetooth միացում

1. Ընտրել **Ընտցնկ** > **Պարամետրեր** > **Միացնելիությն** > **Bluetooth**:
2. Ընտրել **Իմ հեռ. անունը** և անուն մուտքագրել սարքի համար:
3. Bluetooth միացնելիությունն ակտիվացնելու համար ընտրել **Bluetooth** > **Միացնել**: նշանը ցույց է տալիս, որ Bluetooth-ի միացնելիությունն ակտիվ է:
4. Ձեր սարքը ձայնային լրասարքի հետ միացնելու համար ընտրել **Միաց. լս. լրսարքեր** և լրասարքը:
5. Ձեր սարքը տիրույթում առկա որևէ Bluetooth սարքի հետ զուգտակելու համար ընտրել **Զուգտկված սարքեր** > **Ավլ. նոր սարք**:
6. Ոլորել դեպի գտնված սարքը և ընտրել **Ավլցնլ**:
7. Սարքի մեջ մուտքագրել անցակոդ (մինչև16 նիշ) և թույլատրել միացում մյուս Bluetooth սարքի վրա:

Սարքը «թաքնված» ռեժիմում օգտագործելը հնարավորություն է տալիս խուսափել վնասակար ծրագրերից: Մի հաստատեք Bluetooth կապ այն աղբյուրների հետ, որոնց չեք վստահում: Կարող եք նաև անջատել Bluetooth գործառույթը: Սարքի այլ գործառույթների վրա դա ազդեցություն չի ունենա:

#### ԱՀ-ի միացում ինտերնետին

Կարող եք օգտվել Bluetooth տեխնոլոգիայից՝ Ձեր համատեղելի անհատական համակարգիչն ինտերնետին միացնելու համար: Ձեր սարքը պետք է ինտերնետին (ցանցային ծառայությանը) միանալու հնարավորություն ունենա, իսկ ԱՀ-ը պետք է ապահովի Bluetooth տեխնոլոգիա: Սարքի ցանցային մուտքի կետի (NAP) ծառայությանը միանալուց և Ձեր ԱՀ-ի հետ զուգտակելուց հետո, Ձեր սարքն ինքնաբերաբար փաթեթային տվյալների կապ կհաստատի ինտերնետի հետ:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

### Փաթեթային տվյալներ

Ընդհանուր նշանակության փաթեթային ռադիոկապը (GPRS) ցանցային ծառայություն է, որը շարժական հեռախոսներին թույլ է տալիս տվյալներ ուղարկել և ստանալ ինտերնետային կանխագրի (IP) վրա հիմնված ցանցով:

Սահմանելու համար, թե ինչպես օգտվել ծառայությունից, ընտրել **Ընտցնկ** > **Պարամետրեր** > **Միացնելիություն** > **Փաթ. տվյալներ** > **Փաթ. տվյլ. միացում** և հետևյալ ընտրանքներից.

**Պինջի դեպքում** — փաթեթային տվյալների փոխանցման միացում հաստատելու համար, երբ ծրագիրը դա պահանջում է: Միացումը փակվում է, երբ ծրագրի գործողությունն ավարտվում է:

**Միշտ օնլայն** — փաթեթային տվյալների ցանցին ինքնաբար միանալու համար, երբ դուք միացնում եք հեռախոսը:

Դուք կարող եք ձեր հեռախոսն օգտագործել որպես մոդեմ՝ այն միացնելով Bluetooth տեխնոլոգիա օգտագործող համատեղելի ԱՀ-ի: Մանրամասների համար տե՛ս Nokia PC Suite-ի փաստաթղթերի փաթեթը:

### USB տվյալների կաբել

USB տվյալների կաբելը կարող եք օգտագործել հեռախոսի և համատեղելի համակարգչի կամ PictBridge-ը պահովող տպիչի միջև տվյալներ փոխանցելու համար:

Ակտիվացնելու համար հեռախոսը՝ տվյալների փոխանցման կամ պատկեր տպելու նպատակով, միացնել տվյալների փոխանցման կաբելը և ընտրել ռեժիմը.

**PC Suite** — Nokia PC Suite-ի հետ կաբելն օգտագործելու համար:

**Տպում և միջոցներ** — հեռախոսը PictBridge համատեղելի տպիչի կամ համատեղելի համակարգչի հետ օգտագործելու համար:

**Տվյալների պահում** — միացնելու համար համակարգչին, որում չկա Nokia ծրագրակազմ, և հեռախոսը որպես տվյալների պահոց օգտագործելու համար:

USB ռեժիմը փոխելու համար ընտրել **Ընտցնկ** > **Պարամետրեր** > **Միացնելիություն** > **USB տվյալ. կաբել** և համապատասխան USB ռեժիմը:

### Համաժամացում և կրկնօրինակում

Ընտրել **Ընտցնկ** > **Պարամետրեր** > **Հմժ. և կրկնօրնկ** և որևէ մեկը հետևյալից.

**Հեռ. անջատիչ** — Համաժամացնել կամ պատճենել ընտրված տվյալները Ձեր հեռախոսի և մեկ ուրիշ հեռախոսի միջև՝ օգտագործելով Bluetooth տեխնոլոգիա:

**Ստղծ. կրկնօրնկ** — Ստեղծել ընտրված տվյալների կրկնօրինակ

**Վկնգ. կրկնօրնկ** — Ընտրել պահպանված կրկնօրինակ ֆայլը և վերականգնել այն


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

հեռախոսում: Ընտրել Ընտրք > Մանրամասներ ՝ ընտրված կրկնօրինակ ֆայլի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար:

**Տվյ. փոխանցում** — Ընտրված տվյալները համաժամացրեք կամ պատճենեք Ձեր հեռախոսի և մյուս սարքի, ԱՀ-ի կամ ցանցային սերվերի (ցանցային ծառայության) միջև:

## USB սարք միացնելը

Ձեր սարքին կարող եք միացնել USB պահպանման վայր (օրինակ՝ ֆլեշ կրիչ), զննարկել ֆայլերի համակարգը և ֆայլեր փոխանցել:

1 Ձեր սարքի USB պորտին միացնել համատեղելի հարմարիչ:
2 Միացնել USB պահպանման վայրը հարմարիչի կաբելին:
3 Ընտրել Ընտցնկ > Պատկերասրահ և USB սարք՝ զննարկման համար:

**Ծանուցում.** Ապահովվում են ոչ բոլոր USB սարքերը. դա կախված է այդ սարքերի էներգիայի օգտագործման ճանակից:

## Nokia PC Suite

Nokia PC Suite-ի միջոցով կարող եք կառավարել Ձեր երաժշտությունը, համաժամացնել կոնտակտները, օրացույցը, նշումները և անելիքների նշումները Ձեր սարքի և համատեղելի ԱՀ-ի կամ հեռահար ինտերնետային սերվերի միջև (ցանցային ծառայություն):

Nokia PC Suite-ի տեղադրման ֆայլը կարող է առկա լինել սարքի հետ միասին առաքված հիշաքարտի վրա:

Ձեր համակարգչում PC Suite տեղադրելու համար կատարեք հետևյալ գործողությունները.

1 Միացնել սարքը համակարգչին՝ օգտագործելով համատեղելի USB տվյալների կաբել:
2 Որպես սարքի USB ռեժիմ ընտրել **Տվյալների պահում**: Համակարգչում սարքը հայտնվում է որպես հեռացնելի սկավառակ:
3 Եթե տեղադրումը չի սկսվում ինքնաբար, համակարգչից ընտրել սկավառակի հիշաքարտը և աշխատեցնել PC-Suite-ի տեղադրման ֆայլը:
4 Հետևել համակարգչի տեղադրման ծրագրի հրահանգներին:

Համակարգչում PC Suite-ի հաջող տեղադրումից հետո տեղադրման ֆայլը կարելի է ջնջել սարքի հիշաքարտից՝ ավելի շատ միջոցների կամ ծրագրերի համար հիշողության տարածք ազատելու նպատակով:

Լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև PC Suite ներբեռնելու համար այցելեք www.nokia.com/support:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

## Ցանցային ծառայություն մատուցողի ծառայությունները

Ձեր ցանցային ծառայություն մատուցողը մատուցում է մի քանի լրացուցիչ ծառայություն, որոնցից գուցե կցանկանայիք օգտվել: Այդ ծառայություններից մի քանիսի դիմաց կարող է վարձ գանձվել:

## Օպերատորի ընտրացանկ

Մուտք գործեք ձեր ցանցային օպերատորի կողմից տրամադրված ծառայությունների պորտալ: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր ցանցային օպերատորին: Օպերատորը կարող է այս ընտրացանկը թարմացնել սպասարկման հաղորդագրությամբ:

## SIM ծառայություններ

Ձեր SIM քարտը կարող է տրամադրել հավելյալ ծառայություններ: Դուք կարող եք մուտք գործել այս ընտրացանկ այն դեպքում միայն, եթե դա ապահովվում է Ձեր SIM քարտով: Ընտրացանկի անունը և բովանդակությունը կախված են առկա ծառայություններից:

Այս ծառայություններ մուտք գործելը կարող է հանգեցնել հաղորդագրություններ ուղարկելուն կամ կանչեր կատարելուն, ինչի դիմաց Ձեզանից կարող է գանձվել գումար:

## Տեղի մատյան

Ցանցը կարող է ուղարկել Ձեզ դիրքի հարցում (ցանցային ծառայություն): Բաժանորդագրվելու և տեղորոշման տեղեկությունների առաքման մասին համաձայնելու համար դիմեք Ձեր ծառայություն մատուցողին:

Դիրքի հարցումն ընդունելու կամ մերժելու համար ընտրել Ընդուն. կամ Մերժել: Եթե հարցումը մնա անպատասխան, հեռախոսը ինքնաբար ընդունում կամ ժխտում է այն՝ կախված դրանից, թե ինչ պայմանավորվածություն է ձեռք բերված և ցանցային օպերատորի կամ ծառայություն մատուցողի միջև:

Ամենավերջին 10 գաղտնիության ծանուցումների և հարցումների մասին տեղեկությունները դիտելու համար ընտրել Ընտցնկ > Մատյան > Տեղորոշում > Տեղի մատյան:

## Ինֆո հաղորդագրություններ, SIM հաղորդագրություններ և սպասարկման հրամաններ

**Ինֆո հաղորդագրություններ**

Ձեր ծառայությունը մատուցողից կարող եք ստանալ տարբեր թեմաներին վերաբերող հաղորդագրություններ (ցանցային ծառայություն): Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Ձեր ծառայություն մատուցողին:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Ինֆո հղգրներ և առկա ընտրանքներից:

### Սպասարկման հրամաններ

Սպասարկման հրամանները թույլ են տալիս գրել և ուղարկել Ձեր ծառայություն մատուցողին սպասարկման հարցումներ (USSD հրամաններ), ինչպիսիք են ցանցային ծառայությունների համար ակտիվացման հրամանները:

Սպասարկման հարցում գրելու և ուղարկելու համար ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Սպսրկմ. հրմներ: Մանրամասների համար դիմել Ձեր ծառայություն մատուցողին:

### SIM հաղորդագրություններ

SIM հաղորդագրությունները Ձեր SIM քարտի մեջ պահպանվող հատուկ տեքստային հաղորդագրություններ են: Այդ հաղորդագրությունները կարող եք պատճենել կամ տեղափոխել SIM-ից հեռախոսի հիշողության մեջ, բայց ոչ հակառակ ուղղությամբ:

SIM հաղորդագրություն կարդալու համար ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Ընտրք > SIM հղգրություններ:

### Կազմաձևի պարամետրեր

Սարքը հնարավոր է կազմաձևել որոշակի ծառայությունների համար պահանջվող պարամետրերով: Այդ պարամետրերը կարող եք ստանալ որպես ծառայության մատակարարից կազմաձևման հաղորդագրություն:

Ընտրել Ընտցնկ > Պարամետրեր:

Ընտրել Կազմաձև որևէ մեկը հետևյալից.

**Կնխդրվծ կզմձև պմ** — Դիտել սարքում պահպանված ծառայության մատակարարներին և կանխադրել ծառայության մատակարար:

**Ակտ. կնխ. պմ բլ. ծգ** — Ապահովվող ծրագրերի համար ակտիվացնել կանխադրված կազմաձևի պարամետրերը:

**Նախընտ. մտք. կետ** — Դիտել պահպանված մուտքի կետերը:

**Սարքի կովրչի պմտ** — Թույլատրել, որպեսզի սարքը ստանա ծրագրակազմերի թարմացումները, կամ կանխել այն: Կախված սարքից՝ այս ընտրանքը կարող է հասանելի չլինել:

**Անհատ. կզմձև. պմտ** — Զանազան ծառայությունների համար ձեռքով ավելացնել նոր անհատական հաշիվներ, ակտիվացնել կամ վերացնել դրանք: Անհատական նոր հաշիվ ավելացնելու համար ընտրել Ավ. նոր կամ Ընտրք > Ավելացնել նորը: Ընտրել ծառայության տեսակը և մուտքագրել պահանջվող պարամետրերը: Անհատական հաշիվ ակտիվացնելու համար ոլորել դեպի հաշիվ և ընտրել Ընտրք > Ակտիվացնել:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

# Կապի մեջ մնալը

Իմացեք, թե ինչպես կանչեր կատարել, տեքստ մուտքագրել, հաղորդագրություններ ուղարկել և օգտագործել Ձեր սարքի էլփոստի հնարավորությունները:

## Կանչեր կատարելը

### Ձայնային կանչ կատարելը

#### Համարը ձեռքով հավաքելը

Մուտքագրել հեռախոսահամարը՝ ներառյալ միջքաղաքային կոդը, ապա սեղմել կանչի ստեղնը:

Միջազգային կանչերի համար երկու անգամ սեղմել * ՝ միջազգային պրեֆիքս մուտքագրելու համար («+» նիշը փոխարինում է մուտքի միջազգային կոդը), մուտքագրել երկրի կոդը, միջքաղաքային կոդը՝ անհրաժեշտության դեպքում առանց նախորդող «0»-ի, և հեռախոսահամարը:

#### Համարը վերահավաքելը

Հավաքած համարների ցանկ մուտք գործելու համար սպասման ռեժիմում սեղմել կանչի ստեղնը: Ընտրել համար կամ անուն և սեղմել կանչի ստեղնը:

#### Կոնտակտին կանչ կատարելը

Ընտրել Ընտցնկ > Կոնտակտներ և Անուններ: Ընտրել համար կամ անուն և սեղմել կանչի ստեղնը:

#### Ձայնականչեր կառավարելը

Սողանի միջոցով կանչերը կառավարելու համար ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Կանչ > Կանչ ընդ. սհցնելիս:

#### Մուտք կանչին պատասխանելը

Սեղմել կանչի ստեղնը կամ սահեցնելով բացել հեռախոսը:

#### Կանչն ավարտելը

Սեղմել ավարտի ստեղնը կամ սահեցնելով փակել հեռախոսը:

#### Զանգի հնչերանգը խլացնելը

Ընտրել Լռեցնել:

#### Մուտք կանչ մերժելը

Սեղմել ավարտի ստեղնը:

#### Կանչի ընթացքում ձայնը կարգավորելը

Օգտվել ձայնի ուժգնության ստեղներից:

 © 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Համարհավաքի դյուրանցումները

Վերագրեք հեռախոսահամար 2-9 թվային ստեղներից որևէ մեկին: Տե՛ս «Համարհավաքի դյուրանցումներ վերագրելը» էջ 25:

Օգտագործեք արագ համարհավաքը՝ հետևյալ եղանակներից որևէ մեկով կանչ կատարելու համար՝

- Սեղմեք թվային ստեղնը, ապա կանչի ստեղնը:
- Եթե ընտրել եք **Ընտցնկ** > **Պարամետրեր** > **Կանչ** > **Արագ համարհավաք** > **Միացնել** , սեղմեք և պահեք թվային ստեղնը:

## Ձայնային համարհավաք

Կանչ կատարեք՝ արտասանելով Կոնտակտներում պահպանված անունը:

Քանի որ ձայնային հրամանները կախված են լեզվից, ձայնային համարհավաքից առաջ պետք է ընտրել **Ընտցնկ** > **Պարամետրեր** > **Հեռախոս** > **Լեզվի պարամետրեր** > **Հեռախոսի լեզուն** և լեզուն:

**Ծանուցում.** Ձայնային հասկորոշիչներից օգտվելը կարող է դժվար լինել աղմկոտ պայմաններում կամ արտակարգ իրավիճակներում, ուստի հարկավոր չէ բոլոր դեպքերում հույսն ամբողջովին դնել համարը ձայնային հրամաններով հավաքելու վրա:

1 Հիմնական էկրանի ռեժիմում սեղմել և պահել աջ ընտրության ստեղնը: Կարճակվի կարճ ազդանշան, և կցուցադրվի **Խոսել** ձայնից հետո:

2 Արտասանեք այն կոնտակտի անունը, ում համարը ցանկանում եք հավաքել: Եթե ձայնի ճանաչումը հաջողվի, կցուցադրվի առաջարկվող համընկնումների ցուցակը: Հեռախոսը հնչեցնում է ցուցակի առաջին համընկնման ձայնային հրամանը: Եթե դա ճիշտ հրամանը չէ, ոլորեք դեպի այլ գրառում:

## Ընտրանքներ կանչի ընթացքում

Այն ընտրանքներից շատերը, որոնք կարող եք օգտագործել կանչի ընթացքում, ցանցային ծառայություններ են: Ծառայությունների մատչելիությունը պարզելու համար դիմեք ծառայության մատուցողին:

Կանչի ընթացքում ընտրել **Ընտրք** և առկա ընտրանքներից:

Ցանցային ընտրանքներից են՝ **Սպասել**, **Նոր կանչ**, **Ավ. խորհրդժղվն**, **Ավրտ. բոլ. կանչերը**, և հետևյալը՝

**Ուղարկել DTMF** — հնչերանգի հաջորդականություններ ուղարկելու համար:

**Փոխատեղել** — ակտիվ կանչից սպասող կանչ անցնելու համար:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

**Փոխանցել** — սպասող կանչը ակտիվ կանչին միացնելու և Ձեր կանչն անջատելու համար:

**Խորհրդաժողով** — խորհրդաժողով կանչ կատարելու համար:

**Անձնական կանչ** — խորհրդաժողով կանչի ընթացքում մեկուսի քննարկման համար:

## Ձայնային հաղորդագրություններ

Ձայնային փոստարկղը ցանցային ծառայություն է, որի համար կարող է անհրաժեշտ լինի բաժանորդագրվելը: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Ձեր ծառայության մատուցողին:

**Կանչ կատարեք դեպի Ձեր ձայնային փոստարկղ**
Սեղմել և պահել 1:

**Խմբագրեք Ձեր ձայնային փոստարկղի համարը**
Ընտրել Ընտրնկ > Հաղորդագրում > Ձայն. հղզրներ > Ձայն. փոստարկղի հ.:

## Կանչերի մատյան

Ձեր կանչերի, հաղորդագրությունների, տվյալների և համաժամացման վերաբերյալ տեղեկություններ դիտելու համար ընտրեք Ընտրնկ > Մատյան և հարկավոր տարրը:

**Ծանուցում.** Ծառայության մատուցողի՝ հեռախոսազանգերի և այլ ծառայությունների համար ներկայացրած փաստացի հաշիվը կախված է ցանցի առանձնահատկություններից, բոլորակման եղանակից, հարկերից, և այլն:

## Կանչի պարամետրեր

Ընտրել Ընտրնկ > Պարամետրեր և Կանչ և որևէ մեկը հետևյալից.

**Կանչի շեղում** — Վերահասցեավորել մուտք կանչերը (ցանցային ծառայություն): Որոշ կանչեր արգելափակող գործառույթների ակտիվ լինելու դեպքում հնարավոր է, որ չկարողանաք վերահասցեավորել Ձեր կանչերը:

**Որևէ-ստեղն պտսխն** — Պատասխանել մուտք կանչին՝ արագ սեղմելով որևէ ստեղն, բացի սնուցման ստեղնից, ձախ կամ աջ ընտրության ստեղներից կամ ավարտի ստեղնից:

**Ավտ. վերահվքում** — Անհաջող կանչի դեպքում սարքն ինքնաբերաբար վերահավաքում է համարը: Սարքը կատարում է համարը կանչելու 10 փորձ:

**Ձայնի պարզություն** — Բարելավել խոսքի ըմբռնելիությունը, հատկապես աղմկոտ միջավայրերում:

**Արագ համարհավաք** — Հավաքել թվային ստեղներին (2-9) վերագրված անուններն ու հեռախոսահամարները՝ համապատասխան թվային ստեղնը սեղմելով և պահելով:

**Կանչի հետաձգում** — Ընթացիկ կանչի առկայության դեպքում ցանցը ծանուցում է մուտք

 © 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

կանչ ստանալու մասին (ցանցային ծառայություն):

**Կանչի տևող. ցուցդր.** — Ցուցադրել ընթացիկ կանչի տևողությունը:

**Ամփ. կանչից հետո** — Արագ ցուցադրել յուրաքանչյուր կանչից հետո մոտավոր տևողությունը:

**Ուղ. իմ բժնրդ. ID** — Հեռախոսահամարը ցույց տալ այն անձին, ում զանգում եք (ցանցային ծառայություն): Ձեր ծառայության մատակարարի հետ համաձայնեցված պարամետրն օգտագործելու համար ընտրել Դ. է ցնցի կղմց:

**Ելից կանչերի գիծ** — Ընտրել կանչի կատարման հեռախոսագիծը, եթե Ձեր SIM քարտը սատարում է բազմակի հեռախոսագծեր (ցանցային ծառայություն):

**Կանչ ընդ. սհցնելիս** — Կանչին պատասխանել կամ կանչն ավարտել՝ սողանը բացելով կամ փակելով:

## Տեքստ և հաղորդագրություններ

Գրեք տեքստ, ստեղծեք հաղորդագրություններ և նշումներ:

### Տեքստ մուտքագրելը

#### Տեքստային ռեժիմներ

Տեքստ մուտքագրելու համար (օրինակ՝ հաղորդագրություններ գրելիս) կարող եք օգտվել տեքստերի ավանդական կամ կանխատեսող ներմուծման եղանակներից:

Տեքստ գրելիս սեղմեք և պահեք Ընտրք՝ տեքստերի ավանդական ներմուծման եղանակից, որը նշված է պատկերակով, պատկերակով նշված կանխատեսող ներմուծման եղանակին անցնելու համար, և՝ հակառակը: Ոչ բոլոր լեզուներն են կանխատեսող ներմուծման եղանակով ապահովված:

Տառաչափերը նշված են Abc, abc և ABC պատկերակներով:

Տառաչափը փոխելու համար սեղմեք #: Տառային ռեժիմից 123 պատկերակով նշված թվային ռեժիմին անցնելու համար սեղմեք ու պահեք # և ընտրեք **Թվային ռեժիմ**: Թվային ռեժիմից տառային ռեժիմին անցնելու համար սեղմեք ու պահեք #:

Գրելու լեզուն նախադրելու համար ընտրեք Ընտրք > Գրելու լեզուն.

#### Տեքստերի ավանդական ներմուծում

Մի քանի անգամ սեղմեք 2-9 թվային ստեղներից որևէ մեկը, մինչև հայտնվի համապատասխան գրանշանը: Գրանշանների առկայությունը կախված է գրելու ընտրված լեզվից:

Եթե Ձեր ուզած հաջորդ տառը գտնվում է այն նույն ստեղնի վրա, ինչ նախորդը, սպասեք,

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

մինչև հայտնվի շարժագիծը, այնուհետև մուտքագրեք տառը:

Առավել հաճախակի օգտագործվող կետադրական նշաններից և հատուկ նիշերից օգտվելու համար հարկավոր անգամ սեղմեք 1: Հատուկ նիշերի ցանկ մուտք գործելու համար սեղմեք *: Բացատ ավելացնելու համար սեղմեք 0:

## Տեքստերի կանխատեսող ներմուծում

Տեքստերի կանխատեսող ներմուծումը հիմնված է ներկառուցված բառարանի վրա, որում կարող եք նաև նոր բառեր ավելացնել:

1 Սկսեք բառ գրել՝ գործածելով 2-9 ստեղները: Յուրաքանչյուր ստեղն միայն մեկ անգամ սեղմել մեկ տառ գրելու համար:

2 Բառը հաստատելու համար ոլորեք դեպի աջ կամ ավելացրեք բացատ:

- Եթե բառը ճիշտ չէ, մի քանի անգամ սեղմեք * և բառն ընտրեք ցուցակից:
- Եթե բառից հետո արտացոլվել է ? սիմվոլը, ապա տվյալ բառը, որը դուք մտադիր էիք գրել, բառարանում չկա: Բառարանում բառ ավելացնելու համար ընտրեք Հեգել: Մուտքագրեք բառը՝ օգտվելով տեքստերի ավանդական ներմուծման եղանակից, և ընտրեք Պահպ:
- Բաղադրյալ բառեր գրելու համար մուտքագրեք բառի առաջին մասը և այն հաստատելու համար ոլորեք դեպի աջ: Գրեք բառի վերջին մասը և հաստատեք բառը:

3 Սկսեք գրել հաջորդ բառը:

## Տեքստային և մուլտիմեդիա հաղորդագրություններ

Դուք կարող եք ստեղծել հաղորդագրություն և ընտրովի կցել, օրինակ, նկար: Երբ ֆայլ է կցվում, Ձեր հեռախոսը տեքստային հաղորդագրությունն ինքնաբար փոխում է մուլտիմեդիա հաղորդագրության:

## Տեքստային հաղորդագրություններ

Ձեր սարքն ապահովում է մեկ հաղորդագրության ծավալի սահմանափակումը գերազանցող տեքստային հաղորդագրությունների առաքում: Երկար հաղորդագրություններն ուղարկվում են երկու կամ ավելի հաղորդագրությունների տեսքով: Այդ դեպքում ծառայություն մատուցողը կարող է համապատասխան վարձ գանձել: Շեշտերով նշանագրերը, այլ նշաններ կամ որոշ լեզուների ընտրանքներ սովորականից ավելի տեղ են զբաղեցնում՝ սահմանափակելով մեկ հաղորդագրությամբ ուղարկվող նիշերի քանակը:

Ցուցադրվում է մնացած նիշերի ընդհանուր քանակը և ուղարկելու համար անհրաժեշտ հաղորդագրությունների թիվը:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Հաղորդագրություններ ուղարկելու համար Ձեր սարքում պետք է պահպանված լինի հաղորդագրությունների կենտրոնի ճիշտ համարը: Սովորաբար, այս համարը կանխադրված է լինում Ձեր SIM քարտի միջոցով: Համարը ձեռքով նախադրելու համար ընտրեք Ընտրնկ > Հաղորդագրում > Հղգրն պրմտ > Տեքստ. հղգներ > Հղգն կենտրոններ > Ավլց. կենտրոն և մուտքագրեք ծառայության մատակարարից ստացված անունը և համարը:

## Մուլտիմեդիա հաղորդագրություններ

Մուլտիմեդիա հաղորդագրությունը կարող է պարունակել տեքստ, նկարներ և ձայնահոլովակներ կամ տեսահոլովակներ:

Միայն համատեղելի փունկցիոնալ հնարավորություններ ունեցող սարքերը կարող են մուլտիմեդիա հաղորդագրություններ ստանալ և ցուցադրել: Ընդունող սարքից կախված՝ հաղորդագրության տեսքը կարող է տարբեր լինել:

Անլար ցանցը կարող է սահմանափակել MMS հաղորդագրությունների չափը: Եթե հաղորդագրության մեջ ներմուծված նկարի չափը գերազանցում է այս սահմանափակումը, սարքը կարող է այն փոքրացնել, որպեսզի հնարավոր լինի ուղարկել MMS-ի միջոցով:

**Կարևոր է.** Զգույշ եղեք հաղորդագրությունները բացելիս: Հաղորդագրությունները կարող են վնասակար ծրագրեր պարունակել կամ այլ կերպ վնասակար ազդեցություն ունենալ Ձեր սարքի կամ համակարգչի վրա:

Մուլտիմեդիա հաղորդագրությունների ծառայության (MMS) մատչելիությունը ստուգելու և այդ ծառայությանը գրանցվելու համար դիմեք Ձեր ծառայություն մատուցողին:

## Տեքստային կամ մուլտիմեդիա հաղորդագրություն ստեղծելը

1 Ընտրեք Ընտրնկ > Հաղորդագրում > Ստեղծել հղգրն > Հղգրություն:
2 Հասցեատեր ավելացնելու համար ոլորեք դեպի Ում՝ դաշտը և մուտքագրեք հասցեատիրոջ համարը կամ էլփոստի հասցեն կամ ընտրեք Ավլցնլ՝ առկա ընտրանքներից հասցեատերեր ընտրելու համար: Ընտրեք Ընտրք՝ հասցեատերեր ու թեմաներ ավելացնելու և ուղարկման ընտրանքներ նախադրելու համար:
3 Ոլորել դեպի Տեքստ՝ դաշտը և մուտքագրել հաղորդագրության տեքստը:
4 Հաղորդագրությանը բովանդակություն կցելու համար ոլորեք դեպի կցուրդագոտին՝ ցուցասարքի ներքևի մասում, և ընտրեք բովանդակության ցանկալի տեսակը:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

5 Հաղորդագրությունն ուղարկելու համար ընտրէf Ուղրկել:

Հաղորդագրության տեսակը նշվում է ցուցասարքի վերին մասում և ինքնաբար փոխվում է՝ հաղորդագրության բովանդակությունից կախված:

Ծառայության մատակարարները կարող են տարբեր վճարներ գանձել՝ հաղորդագրության տիպից կախված: Մանրամասների համար դիմէf Ձեր ծառայության մատակարարին:

## Զրույցներ և Մուտքի արկղի դիտում

Զրույցներ ում կարող եf դիտել ստացված հաղորդագրությունները՝ դրանց առնչվող հաղորդագրությունների և ուղարկված պատասխանների հետ մեկտեղ: Կարող եf ստացված հաղորդագրությունները մեկ առ մեկ ցանկագրելու համար անցնել Մուտքի արկղի ավանդական դիտման:

Ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում:

### Զրույցներում պարունակվող հաղորդագրությունները դիտելը

1 Ընտրել Զրույցներ:
2 Ոլորել դեպի որևէ զրույց և ընտրել Բացել:
3 Ոլորել դեպի հաղորդագրություն և ընտրել Ընտրf > Բացել:

### Փոխել Զրույցների և Մուտքի արկղի դիտումների միջև

Ընտրել Ընտրf > Մ. արկղի դիտում կամ Զրույցի դիտում:

## Հաղորդագրություն կարդալ ն ու պատասխանելը

Ձեր սարքը տեղեկացնում է նոր հաղորդագրություն ստանալու մասին:

**Կարևոր է.** Զգույշ եղէf հաղորդագրությունները բացելիս: Հաղորդագրությունները կարող են վնասակար ծրագրեր պարունակել կամ այլ կերպ վնասակար ազդեցություն ունենալ Ձեր սարքի կամ համակարգչի վրա:

### Ստացված հաղորդագրությունն ընթերցելը

Ընտրել Դիտել: Եթե ստացվել է մեկից ավելի հաղորդագրություն, ընտրել հաղորդագրությունը Մուտքի արկղից կամ Զրույցներից:

### Հաղորդագրությանը պատասխանելը

Ընտրել Պտսխն:

## Հաղորդագրություններ ուղարկելը և կազմակերպելը

Հաղորդագրություն ուղարկելու համար ընտրէf Ուղարկել: Հեռախոսը պահպանում է


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

հաղորդագրությունը Ելից պահոցում և սկսում է ուղարկելը:

**Ծանուցում.** Ձեր սարքի էկրանին հայտնված «հաղորդագրությունն ուղարկված է» պատկերակը կամ տեքստը չի նշանակում, որ հաղորդագրությունը ստացվել է նախատեսված նպատակատեղում:

Եթե հաղորդագրություն ուղարկելը ընդհատվեց, հեռախոսը մի քանի անգամ կրկին փորձում է ուղարկել հաղորդագրությունը: Եթե այն փորձերը չեն հաջողվում, հաղորդագրությունը մնում է Ելից պահոցում: Հաղորդագրություն ուղարկելը դադարեցնելու համար Ելից պահոցում ընտրել Ընտրք > Դադար. ուղարկելը:

Ուղարկված հաղորդագրությունները Ուղարկված պահոցում պահպանելու համար ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Հղգրն պրմտ > Ընդհան. պրմտ > Պհպլ ուղկվծ հղգրնր:

Հեռախոսը պահպանում է ստացված հաղորդագրությունները Մուտքի պահոցում: Կազմակերպեք Ձեր հաղորդագրությունները Պահպանված պահոցում:

Պահոց ավելացնելու, վերանվանելու կամ ջնջելու համար ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Պհպնծ տարրեր > Ընտրք:

## Տառապ հաղորդագրություններ

Տառապ հաղորդագրությունները տեքստային հաղորդագրություններ են, որոնք ակնթարթորեն ցուցադրվում են ստացվելուն պես:

1 Տառապ հաղորդագրություն գրելու համար ընտրեք Ընտցնկ > Հաղորդագրում > Ստեղծել հղգրն > Տառապ հղգրն:
2 Մուտքագրեք հասցեատիրոջ հեռախոսահամարը, գրեք ձեր հաղորդագրությունը (առավելագույնը՝ 70 նիշ), և ընտրեք Ուղրկել:

## Nokia Xpress ձայնային հաղորդագրություններ

MMS-ի միջոցով հուսալիորեն ստեղծեք և ուղարկեք ձայնային հաղորդագրություններ:

1 Ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Ստեղծել հղգրն > Ձայն. հղգրություն: Բացվում է ձայնագրանցիչը:
2 Գրանցեք ձեր հաղորդագրությունը:
3 Մուտքագրեք մեկ կամ ավելի հեռախոսահամար Ում՝ դաշտում, կամ ընտրեք Ավլցնլ ՝ հեռախոսահամար առբերելու համար:
4 Հաղորդագրությունն ուղարկելու համար ընտրեք Ուղրկել:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Հաղորդագրության պարամետրեր

Ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Հղգրն պրմտ և որևէ մեկը հետևյալից.

**Ընդհան. պրմտ** — Սարքի մեջ պահպանել ուղարկված հաղորդագրությունների պատճեններ, վերագրանցել հին հաղորդագրությունները հաղորդագրությունների հիշողության լիքը լինելու դեպքում և նախադրել հաղորդագրությունների հետ կապված այլ նախապատվություններ:

**Տեքստ. հղգներ** — Թույլատրել առաքման հաշվետվություններ, կազմաձևել SMS-ի և SMS էլփոստի համար հաղորդագրությունների կենտրոններ, ընտրել գրանշանների ապահովման տեսակը և նախադրել տեքստային հաղորդագրությունների հետ կապված այլ նախապատվություններ:

**Մուլտիմ. հղգներ** — Թույլատրել առաքման հաշվետվություններ, կազմաձևել մուլտիմեդիա հաղորդագրությունների տեսքը, թույլատրել մուլտիմեդիա հաղորդագրությունների և գովազդի ընդունումը և նախադրել մուլտիմեդիա հաղորդագրություններին վերաբերող այլ նախապատվություններ:

**Էլփոստ հղգրներ** — Թույլատրել էլփոստի ընդունումը, նախադրել էլփոստում պատկերի ծավալը և նախադրել էլփոստին վերաբերող այլ նախապատվություններ:

**Սպաս. հղգրներ** — Ակտիվացրել սպասարկման հաղորդագրությունները և նախադրել սպասարկման հաղորդագրություններին վերաբերող նախապատվությունները:

## Փոստ և ակնթարթային հաղորդագրում

Նախադրել Ձեր սարքը՝ Ձեր փոստի հաշվի միջոցով նամակներ ուղարկելու և ստանալու, կամ ակնթարթային հաղորդագրման (ԱՀ) համայնքում զրուցելու համար:

Ձեր սարքը կարող է ապահովել Nokia Հաղորդագրման ծառայություն (NMS) կամ դասական Nokia Փոստ կամ Nokia ԱՀ՝ Ձեր երկրից կախված: Տեսնելու համար, թե որ հաղորդագրման համակարգն է գործում, ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Էլփոստի հղգն:

Եթե ցուցասարքի վերին մասում

է հայտնվում, ապա գործում է Nokia Հաղորդագրման ծառայությունը: Տե՛ս «Nokia Հաղորդագրման ԱՀ», էջ 41 և «Nokia Հաղորդագրման փոստ», էջ 42:

Այլապես, տե՛ս «Nokia ԱՀ», էջ 44 և «Էլփոստ», էջ 44:

 © 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Nokia Հաղորդագրման ԱՀ

Ակնթարթային հաղորդագրությունների փոխանակման (ԱՀ) միջոցով կարող եք զրուցել այլ առցանց օգտագործողների հետ՝ օգտվելով Ձեր սարքից:

Կարող եք օգտագործել Ձեր սարքի կողմից ապահովված ԱՀ համայնքի հետ արդեն գոյություն ունեցող հաշիվ:

Եթե գրանցված չեք ԱՀ ծառայությանը, կարող եք ԱՀ հաշիվ ստեղծել ապահովված ԱՀ ծառայության հետ՝ օգտվելով Ձեր համակարգչից կամ սարքից: Ընտրացանկերը կարող են տարբեր լինել՝ ԱՀ ծառայությունից կախված:

### ԱՀ ծառայություններ

**Առկա ԱՀ հաշիվ մտնելը**

1. Ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Ակնթարթային հաղորդագրությունների փոխանակում:
2. Ընտրել ԱՀ ծառայություն:
3. Մուտքագրել հաշվի ID-ն և նշանաբառը:
4. Հետևեք ցուցասարքին ցուցադրվող հրահանգներին:

### Nokia նոր հաշիվ ստեղծելը

Ձեր անհատական համակարգչի միջոցով փոստի և ԱՀ-ի ծառայությունները ներառող Nokia հաշիվ ստեղծելու համար այցելեք www.ovi.com: Ձեր սարքի միջոցով հաշիվ ստեղծելու համար կատարեք հետևյալ գործողությունները.

1. Ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Էլփոստի հղցն:
2. Հետևեք ցուցասարքին ցուցադրվող հրահանգներին:

**ԱՀ ծառայությունները միաժամանակ օգտագործելը**

1. Դեպի ԱՀ հիմնական տեսք վերադառնալու համար ԱՀ որևէ ծառայությունից ընտրել Հիմնկն:
2. Ընտրել ԱՀ ծառայություն և մտնել:
3. ԱՀ ծառայությունների միջև անցում կատարելու համար կոնտակտների ցանկի տեսքում ոլորել ձախ կամ աջ:

### Հաղորդագրություններ փոխանակելը

Ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Ակնթարթային հաղորդագրությունների փոխանակում:

**ԱՀ ուղարկելը**

1. Ընտրել ԱՀ ծառայություն:
2. Կոնտակտների ցանկից ընտրել կոնտակտ:

   Զրույցի դիտման մեջ յուրաքանչյուր զրույց տեղի է ունենում առանձին էջանիշում:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

3 Հաղորդագրությունը մուտքագրել ցուցասարքի ներքևում գտնվող տեքստային տուփում:
4 Ընտրել Ուղրկլ:

**Հաղորդագրություններ ստանալը**

Երբ ներկայիս զրույցի ընթացքում ստանում եք նոր հաղորդագրություն, այն հայտնվում է զրույցի պատմության վերջում: Երբ նոր հաղորդագրություն եք ստանում այլ զրույցի համար, համապատասխան զրույցի էջանիշը սկսում է թարթել: Զրույցների միջև անցում կատարելու համար կատարեք հետևյալ գործողությունները.

1 Ոլորել դեպի զրույցի էջանիշը:
2 Զրույց բացելու համար ոլորել ձախ կամ աջ:

Երբ նոր հաղորդագրությունը ստանում եք այլ համայնքից, այն նշվում է վերին կամ ստորին անկյունում:

Ոլորել վեր և ընտրել **Փոխել** կամ **Ընտրել**:

**Ծանուցման պարամետրեր**

Նույնիսկ այն ժամանակ, երբ ծրագիրը չի օգտագործվում, Դուք ծանուցվում եք նոր հաղորդագրությունների մասին: Ծանուցման պարամետրերը փոփոխելու համար կատարեք հետևյալ գործողությունները.

1 ԱՀ հիմնական տեսքում ընտրել Ընտրք > IM պարամետրեր:
2 Ընտրել ծանուցման տեսակը և Պիպնլ:

**ԱՀ ծրագրից դուրս գալը**

Ակնթարթային հաղորդագրությունների փոխանակման (ԱՀ) ծրագրից դուրս գալուց հետո Դուք դեռ մնում եք ԱՀ այլ ծառայություններում: Ձեր աշխատաշրջանները, համաձայն ծառայության բաժանորդագրման, որոշ ժամանակ մնում են ակտիվ: Երբ ԱՀ ծրագիրն աշխատում է հետին պլանում, հնարավոր է բացել այլ ծրագրեր, ապա վերադառնալ ԱՀ օգտագործման՝ առանց կրկին մտնելու անհրաժեշտության:

**ԱՀ պատուհանը փակելը**

Անցնել դեպի ԱՀ հիմնական տեսքը և ընտրել Ելք:

**ԱՀ-ից դուրս գալը**

Ընտրել Ընտրք > Դուրս գալ:

Բոլոր զրույցները փակվում են:

## Nokia Հաղորդագրման փոստ

Ձեր շարժական սարքի միջոցով մուտք գործեք դեպի տարբեր մատակարարներից ստացված փոստի հաշիվներ՝ նամակ կարդալու, գրելու և ուղարկելու համար:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Նախքան կկարողանաք փոստից օգտվել, պետք է փոստի հաշիվ ունենաք: Եթե արդեն փոստի հաշիվ չունեք, այն ստեղծեք Ovi-ում: Ընտրացանկերը կարող են տարբեր լինել՝ փոստի մատակարարից կախված:

### Փոստ նախադրելը

Կարող եք մտնել փոստի առկա հաշիվ կամ նախադրել Ovi Փոստ նոր հաշիվ:

Ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Էլփոստի հղցն:

### Փոստի Ձեր հաշիվը մտնելը

1 Ընտրել փոստային ծառայության մատակարարին:
2 Մուտքագրել հաշվի ID-ն և նշանաբառը:
3 Ընտրել Հիշել նշանաբառը՝ փոստի հաշիվ մտնելու ժամանակ նշանաբառի հարցումն անջատելու համար:
4 Ընտրել Մտնել:

Փոստի լրացուցիչ հաշիվ մտնելու համար ընտրել Ավելացնել հաշիվ:

### Ovi Փոստ նախադրելը

Եթե դեռ չունեք փոստի հաշիվ, կարող եք ստեղծել Nokia հաշիվ, որն ընդգրկում է Ovi Փոստ ծառայությունը:

1 Ընտրել Ստացեք Ovi Mail:
2 Հետևեք ցուցասարքին ցուցադրվող հրահանգներին:

Նոր Nokia հաշիվ ստեղծելուն պես կարող եք մտնել Ovi Փոստ ծառայություն և սկսել ուղարկել ու ստանալ փոստային հաղորդագրություններ: Հաշիվը կարող եք նաև օգտագործել՝ Ovi այլ ծառայություններ, օրինակ՝ ԱՀ, մտնելու համար: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք www.ovi.com:

### Փոստային հաղորդագրություններ կարդալը, ստեղծել ն ու ուղարկելը

Ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Էլփոստի հղցն և փոստի հաշիվ:

### Փոստային հաղորդագրություններ կարդալը և դրանց պատասխանելը

1 Ընտրել փոստային հաղորդագրություն և Բացել:
2 Փոստային հաղորդագրությունն ամբողջությամբ տեսնելու համար օգտագործել ոլորման ստեղնը:
3 Փոստային հաղորդագրությանը պատասխանելու կամ այն փոխանցելու համար ընտրել Ընտրնք:

### Կցորդները դիտելը և պահելը

Կցորդներ, օրինակ՝ նկարներ, պարունակող փոստային հաղորդագրությունները նշվում են

ամրակի պատկերակով: Որոշ կցուրդներ կարող են համատեղելի չլինել Ձեր սարքի հետ, և սարքը դրանք չի կարողանա ցուցադրել:

1 Կցուրդների ցանկն ընդլայնելը:
2 Ընտրել կցուրդ և Դիտել:
3 Կցուրդը սարքում պահելու համար ընտրել Պահել:

**Փոստային հաղորդագրություն ստեղծելն ու ուղարկելը**

1 Ընտրել Ընտրնք > Կազմել:
2 Մուտքագրել ստացողի էլփոստի հասցեն, թեման և Ձեր հաղորդագրությունը:
3 Փոստային հաղորդագրությանը ֆայլ կցելու համար ընտրել Ընտրնք > Կցել ֆայլ:
4 Պատկեր սևեռելու և այն փոստային հաղորդագրությանը կցելու համար ընտրել Ընտրնք > Կցել նոր պատկեր:
5 Փոստային հաղորդագրությունն ուղարկելու համար ընտրել Ուղարկել:

**Փոստի ծրագիրը փակելը**

Ընտրել Դուրս գալ:

**Փոստի Ձեր հաշվից ԱՀ մուտք գործելը**

Փոստային ծառայությունների որոշ մատակարարներ թույլ են տալիս ակնթարթային հաղորդագրման հաշիվ մուտք գործել անմիջապես փոստային հաշվից:

Փոստային հաղորդագրություն գրելու ընթացքում ծառայությունների Ձեր մատակարարի ակնթարթային հաղորդագրությունների փոխանակման ծառայություն մտնելու համար ընտրել Ընտրնք և Ձեր ԱՀ ծառայությունը:

## Nokia ԱՀ

Ակնթարթային հաղորդագրությունների փոխանակման (ԱՀ) ցանցային ծառայության միջոցով կարող եք տեքստային հաղորդագրություններ ուղարկել առցանց օգտագործողներին: Դուք պետք է բաժանորդագրվեք ծառայությանը և գրանցվեք այն ԱՀ ծառայությանը, որից ուզում եք օգտվել: Այս ծառայության առկայության, գնորոշման և հրահանգների վերաբերյալ հարցերով դիմեք Ձեր ծառայության մատակարարին: Ընտրացանկերը կարող են տարբեր լինել՝ ԱՀ մատակարարից կախված:

Ծառայությանը միանալու համար ընտրեք Ընտցնկ > Հաղորդագրում > IM-ներ, և հետևեք հրահանգներին:

**Էլփոստ**

Մուտք գործեք Ձեր POP3 կամ IMAP4 էլփոստի հաշիվը Ձեր հեռախոսից՝ էլ-նամակ կարդալու, գրելու և ուղարկելու համար:

 © 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Էլփոստի այս ծրագիրը տարբեր է SMS-ի էլփոստի գործառույթից:

Նախքան էլփոստից օգտվել կարողանալը, Դուք պետք է ունենաք էլփոստի հաշիվ և ճիշտ պարամետրեր: Առկայության և ճիշտ պարամետրերի համար դիմեք էլփոստի ծառայություն մատուցողին:

## Էլփոստի գործարկման մոգ

Էլփոստի գործարկման մոգը մեկնարկում է ինքնաբերաբար, եթե հեռախոսի մեջ էլփոստի պարամետրեր սահմանված չեն: Լրացուցիչ էլփոստի հաշվի համար գործարկման մոգն աշխատեցնելու նպատակով ընտրել **Ընտցնկ** > **Հաղորդագրում** և գոյություն ունեցող էլփոստի հասցեն: Ընտրել **Ընտրf** > **Ավլց. փոստարկղ՝** էլփոստի գործարկման մոգն աշխատեցնելու համար: Հետևել ցուցաարքի վրա տրված հրահանգներին:

## Էլ-նամակ գրելը և ուղարկելը

Ձեր էլ-նամակը կարող եք գրել էլփոստի ծառայությանը միանալուց առաջ:

1 Ընտրել **Ընտցնկ** > **Հաղորդագրում** > **Ստեղծել հղցրն** > **Էլփոստի հղցն**:

2 Մուտքագրել ստացողի էլփոստի հասցեն, թեման և էլփոստի հաղորդագրությունը: Ֆայլ կցելու համար ընտրել **Ընտրf** > **Մտցնել** և առկա ընտրանքներից:

3 Եթե սահմանված է մեկից ավել էլփոստի հաշիվ, ընտրեք այն հաշիվը, որից ցանկանում եք ուղարկել էլ-նամակը:

4 Էլ-նամակ ուղարկելու համար ընտրել **Ուղարկել**:

## Էլ-նամակ կարդալ ն ու պատասխանելը

**Կարևոր է.** Զգույշ եղեք հաղորդագրությունները բացելիս: Հաղորդագրությունները կարող են վնասակար ծրագրեր պարունակել կամ այլ կերպ վնասակար ազդեցություն ունենալ Ձեր սարքի կամ համակարգչի վրա:

1 Էլփոստի հաղորդագրությունների խորագրերը ներլցնելու համար սեղմել **Ընտցնկ** > **Հաղորդագրում** և Ձեր էլփոստի հաշիվը:

2 Էլ-նամակը և դրա հավելվածները ներլցնելու համար ընտրել էլ-նամակը և **Բացել** կամ **Առբերել**:

3 Էլ-նամակին պատասխանելու կամ այն փոխանցելու համար ընտրել **Ընտրf** և առկա ընտրանքներից:

4 Ձեր էլփոստի հաշիվը անջատվելու համար ընտրել **Ընտրf** > **Անջատել**: Որոշ ժամանակ գործունեությունը դադարեցնելուց հետո կապը էլփոստի հաշվի հետ ինքնաբար ավարտվում է:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

### Նոր էլփոստի ծանուցումներ

Ձեր հեռախոսը կարող է ինքնաբար ժամանակ առ ժամանակ ստուգել Ձեր էլփոստի հաշիվը և ծանուցում ուղարկել նոր էլ-նամակ ստանալու մասին:

1 Ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Հղգրն պրմտ > Էլփոստ հղգրներ > Խմբգրլ փոստկղերը:

2 Ընտրել Ձեր էլփոստի հաշիվը, Ներլցման պրմտ, և հետևյալ ընտրանքներից.

**Փստկղ թրմց. միջկյf** — կարգավորելու համար, թե ինչ հաճախականությամբ է նոր նամակի մասին ծանուցելու համար հեռախոսը ստուգում Ձեր էլփոստի հաշիվը:

**Ավտոմատ առբերում** — Ձեր էլփոստի հաշվից նոր էլ-նամակը ինքնաբար առբերելու համար:

3 Նոր էլ-նամակի մասին ծանուցումը միացնելու համար ընտրել Ընտցնկ > Հաղորդագրում > Հղգրն պրմտ > Էլփոստ հղգրներ > Նոր էլ-նմկի ծնցմ > Միացնել:

## Լուսանկարահանում և տեսագրում

### Պատկերներ սևեռելը

**Խցիկի ակտիվացումը**

Սեղմել «Սևեռել»ստեղնը կամ, տեսագրման ռեժիմում, ոլորել ձախ կամ աջ:

**Չափերը մեծացնելը կամ փոքրացնելը**

Պատկերի ռեժիմում ոլորել վեր կամ վար, կամ օգտագործել ձայնի կարգավորման ստեղները:

**Պատկեր սևեռելը**

Սեղմել «Սևեռել» ստեղնը:

Պատկերները պահվում են Պատկերասրահ ում:

**Սևեռելուց հետո պատկերներ ցուցադրելը**

Ընտրել Ընտրf > Պարամետրեր > Լսնկրի նխդիտմ. ժկ և նախադիտման ժամանակը:

**Պատկերի նախադիտումը ձեռքով ավարտելը**

Ընտրել Հետ:

Ձեր սարքը ապահովում է մինչև 1536x2048 պիքսել խտությամբ նկարահանում:

 © 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Տեսահոլովակներ տեսագրելը

**Տեսագրման ռեժիմն ակտիվացնելը**

Սեղմել և պահել «Սևեռել»ստեղնը կամ, եթե պատկերի ռեժիմում է, ոլորել ձախ կամ աջ:

**Գրանցում սկսելը**

Սեղմել «Սևեռել» ստեղնը:

**Տեսագրումն ընդմիջելը կամ վերսկսելը**

Ընտրել Դադար կամ Շարուն.:

Այլապես, սեղմել «Սևեռել» ստեղնը:

**Գրանցումն ավարտելը**

Ընտրել Վերջ:

Տեսահոլովակները պահվում են Պատկերասրահ ում:

## Խցիկի և տեսագրման պարամետրեր

Ընտրել Ընտցնկ > Միջոցներ > Խցիկ:

Պատկերի կամ տեսագրման ռեժիմում ընտրել Ընտրք և որևէ մեկը հետևյալից.

**Ինքնաթողք** — Օգտագործել ինքնաթողք:

**Էֆեկտներ** — Սևեռված պատկերի համար կիրառել տարբեր էֆեկտներ (օրինակ՝ մոխրագույնի սանդղակ և կեղծ գույն):

**Սպիտ. հաշվեկշիռ** — Խցիկը հարմարեցնել լուսավորման առկա պայմաններին:

**Հորիզոն. ձևաչափ** կամ **Ուղղաձիգ ձևաչափ** — Ընտրել խցիկի կողմնորոշումը:

**Պարամետրեր** — Փոփոխել խցիկի և տեսագրման այլ պարամետրեր և ընտրել պատկերների և տեսանյութերի պահպանման տեղը:

## Պատկերասրահ

Կառավարեք պատկերները, տեսահոլովակները, երաժշտական ֆայլերը, թեմաները, գրաֆիկան, հնչերանգները, ձայնագրությունները և ստացված ֆայլերը: Այդ ֆայլերը պահվում են սարքի հիշողության մեջ կամ հիշաքարտի վրա, և դրանք հնարավոր է դասավորել պահոցներում:

## Լուսանկարներ

Պատկերները դիտեք և տեսահոլովակները նվագարկեք «Լուսանկարներ» ծրագրի միջոցով:

Ընտրել Ընտցնկ > Պատկերասրահ > Լուսանկարներ:

Ընտրել որևէ մեկը հետևյալից.

**Բլր լուսնկարները** — Դիտեք պատկերները որպես մանրապատկերների ցանց: Պատկերները կարող եք տեսակավորել ըստ ամսաթվի, անվան կամ չափի:

**Ժմնկի սանդղակ** — Դիտեք պատկերները այն հերթականությամբ, որով դրանք սևեռվել են:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

**Ալբոմներ** — Պատկերները տեսակավորեք՝ կազմելով ալբոմներ: Կարող եք ստեղծել, վերանվանել և հեռացնել ալբոմներ: Եթե ալբոմը հեռացվում է, դրանում եղած պատկերները հիշողությունից չեն վերանում:

**Պատկեր պտտելը**

Ընտրել Ընտրք > Հորիզոն. ռեժիմ կամ Ուղղաձիգ ռեժիմ:

**Սլայդերի ցուցադրում դիտելը**

Սլայդերի ցուցադրման համար օգտագործվում են ներկա պահին ընտրված պահոցում կամ ալբոմում պարունակվող պատկերները:

1 Ընտրել Բլր լուսնկարները, Ժմնկի սանդղակ, կամ Ալբոմներ:
2 Ընտրել Ընտրք > Սլայդ. ցուցադրում:
3 Ընտրել Սկս. սլայդ. ցուցդրում:

**Պատկերներ խմբագրելը**

Կարող եք, օրինակ, պտտել, շրջել, եզրատել պատկերները և կարգավորել դրանց պայծառությունը, ցայտունությունը և գույները:

1 Ընտրել որևէ պատկեր Բլր լուսնկարները, Ժմնկի սանդղակ ում կամ Ալբոմներ ում:
2 Ընտրել Ընտրք > Խմբգրլ լուսանկար:
3 Ընտրել խմբագրման որևէ ընտրանք և օգտագործել ոլորման ստեղնը՝ պարամետրերը կամ արժեքները փոխելու համար:

**Երաժշտություն և տեսահոլովակներ**

Երգեր նվագելու և տեսահոլովակներ դիտելու համար սարքում առկա է մեդիա նվագարկիչ: Սարքի հիշողության կամ հիշաքարտի երաժշտական պահոցում պահվող երաժշտական ֆայլերն ու տեսաֆայլերը ինքնաբերաբար հայտնաբերվում և ավելացվում են տեսա- կամ երաժշտադարանին:

Ընտրել Ընտցնկ > Պատկերասրահ և Երժշ. և տսնյթեր:

Ընտրել որևէ մեկը հետևյալից.

**Տեսահլվկներ** — Թվել առկա բոլոր տեսահոլովակները:

**Բոլոր երգերը** — Թվել առկա բոլոր երգերը: Օրինակ՝ կարող եք երգերը տեսակավորել ըստ կատարողի, ալբոմի կամ ժանրի:

**Պահոցներ և ֆայլեր կառավարելը**

Պատկերասրահ ում պահոցներ և ֆայլեր կառավարելու համար ընտրել Ընտցնկ > Պատկերասրահ:

**Պահոցների ցանկը դիտելը**

Ընտրել Ամբողջը:

 © 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

**Պահոցում ֆայլերի ցանկը դիտելը**

Ընտրել պահոց և **Բացել**:

**Ֆայլ տեղափոխելու ընթացքում հիշաքարտի պահոցները դիտելը**

Ոլորել դեպի հիշաքարտ, ապա ոլորել աջ:

## Պատկերներ տպելը

Ձեր սարքն ապահովում է Nokia XpressPrint, որը թույլ է տալիս տպել JPEG ձևաչափով պատկերներ:

1 Օգտագործելով USB տվյալների կաբել կամ, եթե տպիչն ապահովում է, Bluetooth միացնելիություն՝ սարքը միացրեք համատեղելի տպիչի:

2 Ընտրել որևէ պատկեր Պատկերասրահից և **Ընտրք** > **Տպել**:

## Հիշաքարտ

Օգտագործեք հիշաքարտը՝ Ձեր մուլտիմեդիա ֆայլերը, օրինակ՝ տեսահոլովակները, երգերը, ձայնային ֆայլերը, պատկերները և հաղորդագրությունների փոխանակման տվյալները պահելու համար:

Ընտրել **Ընտցնկ** > **Պատկերասրահ** > **Ամբողջը** > **Հիշաքարտ**:

Պատկերասրահ ի որոշ պահոցներ, որոնք պարունակում են սարքի կողմից օգտագործվող բովանդակություն (օրինակ՝ Թեմաներ) կարող են պահվել հիշաքարտում:

Եթե հիշաքարտը նախապես ֆորմատավորված չէր, անհրաժեշտ է այն ֆորմատավորել: Հիշաքարտը ֆորմատավորելիս քարտի վրա եղած բոլոր տվյալները ընդմիշտ կվերանան:

**Հիշաքարտը ֆորմատավորելը**

Ընտրել **Ընտրք** > **Հիշքրտի ընտրանք** > **Ֆորմատ. հիշաքարտ** > **Այո**: Ֆորմատավորման ավարտից հետո մուտքագրել հիշաքարտի անունը:

**Հիշաքարտը նշանաբառով պաշտպանելը**

Ընտրել **Ընտրք** > **Հիշքրտի ընտրանք** > **Դնել նշանաբառ**: Հիշաքարտը պահպանվում է Ձեր սարքում, իսկ եթե փորձեք հիշաքարտն օգտագործել այլ սարքում, անհրաժեշտ կլինի պարզապես մուտքագրել նշանաբառը:

**Հիշաքարտի նշանաբառը հեռացնելը**

Ընտրել **Ընտրք** > **Հիշքրտի ընտրանք** > **Վերացնել նշանաբառը**:

**Հիշողության օգտագործումը ստուգելը**

Ընտրել **Ընտրք** > **Մանրամասներ**: Ցուցադրում է տվյալների տարբեր խմբերի օգտագործած հիշողությունը և նոր ծրագրակազմ տեղադրելու համար առկա հիշողության ծավալը:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

# Ժամանց

## Երաժշտություն լսելը

Երաժշտություն լսեք նվագարկչով կամ ռադիոյով, իսկ ձայնագրանցիչով ձայնագրեք հնչյուններ կամ ձայներ: Երաժշտությունը ներլցրեք ինտերնետից կամ փոխանցեք Ձեր համակարգչից:

**Ուշադրություն.**
Տևականորեն բարձր ձայն լսելը կարող է վնասել Ձեր լսողությունը: Երաժշտությունը լսեք չափավոր բարձրությամբ և բարձրախոսից օգտվելիս սարքն ականջին մոտ մի պահեք:

## Մեդիա նվագարկիչ

Մեդիա նվագարկիչը բացելու համար ընտրել Ընտցնկ > Միջոցներ > Մեդիա նվգրկիչ:

### Երաժշտության ընտրացանկ

Մուտք գործեք սարքի հիշողության կամ հիշաքարտի հիշողության մեջ պահվող երաժշտական ֆայլերը, համացանցից ներլցրեք երաժշտություն կամ տեսահոլովակներ, կամ դիտեք համատեղելի հոսքային տեսանյութեր ցանցային սերվերով (ցանցային ծառայություն):

Ընտրել Ընտցնկ > Միջոցներ > Մեդիա նվգրկիչ:

**Մեդիա ֆայլ նվագարկելը**
Առկա պահոցներից ընտրել ֆայլ և Նվգրկել:

**Համացանցից ֆայլեր ներլցնելը**
Ընտրել Ընտրք > Ներլցումներ և ներլցման կայք:

**Երաժշտադարանը ֆայլերն ավելացնելուց հետո թարմացնելը**
Ընտրել Ընտրք > Թրմցնլ երժշտդրնը:

### Երգացանկ ստեղծելը

1 Ընտրել Երգացանկեր > Ստեղծել երգացանկ և մուտքագրել երգացանկի անունը:
2 Ցուցադրվող ցանկերից երաժշտություն կամ տեսահոլովակներ ավելացնելը:
3 Երգացանկը պահելու համար ընտրել Արված:

### Հոսքային ծառայության կազմաձևումը

Հոսքային պարամետրերը կարող եք ստանալ որպես կազմաձևման հաղորդագրություն ծառայության մատակարարից: Պարամետրերը հնարավոր է նաև մուտքագրել ձեռքով:

1 Ընտրել Ընտրք > Ներլցումներ > Հոսքային պարմտրեր > Կազմաձև:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

2 Ընտրել ծառայության մատակարար Կանխադրված կամ Անհատ. կզմձև հոսfային ծառայության համար:

3 Կազմաձևման ակտիվ պարամետրերից ընտրել Հաշիվ և հոսfային ծառայության հաշիվ:

## Երգեր նվագարկելը

**Մեդիա նվագարկչից օգտվելը**
Սեղմել երաժշտաստեղները կամ օգտագործել ոլորման ստեղները՝ ցուցասարfի թվացյալ ստեղներին համապատասխան:

**Ձայնի բարձրությունը կարգավորելը**
Օգտագործել ձայնի բարձրության ստեղները:

**Նվագարկումը սկսելը կամ ընդմիջելը**
Սեղմել ▶‖:

**Դեպի հաջորդ երգը ցատկելը**
Սեղմել ▶▶|:

**Դեպի նախորդ երգը ցատկելը**
Երկու անգամ սեղմել |◀◀:

**Ընթացիկ երգը արագ առաջ փաթաթելը**
Սեղմել և պահել ▶▶|:

**Ընթացիկ երգը հետ փաթաթելը**
Սեղմել և պահել |◀◀:

**Դեպի երաժշտության ընտրացանկ փոխելը**
Ընտրել ☰:

**Դեպի ընթացիկ ընտրացանկ փոխելը**
Ընտրել (••):

**Նվագարկիչը հետին պլանում աշխատեցնելը**
Սեղմել «Վերջ» ստեղնը:

**Մեդիա նվագարկիչն անջատելը**
Սեղմել և պահել «Վերջ» ստեղնը:

## Մեդիա նվագարկչի տեսfը փոխելը

Ձեր սարfում կա մի fանի թեմա՝ մեդիա նվագարկչի տեսfը փոխելու համար:

Ընտրել Ընտցնկ > Միջոցներ > Մեդիա նվգրկիչ և Գն. Մեդիա նվգկչ > Ընտրf > Պարամետրեր > Մեդիա նվգկչի թեմա և նախընտրելի թեման:

Թվացյալ ստեղները կարող են փոխվել՝ ըստ թեմայի:

## Երաժշտությունը համակարգչից փոխանցելը

Երաժշտությունը հնարավոր է դեպի Ձեր սարf փոխանցել հետևյալ կերպ.

© 2009 Nokia Բոլոր իրավունfները պաշտպանված են: 

- Օգտագործել Nokia Music՝ դեպի Ձեր համակարգիչ և շարժական սարք նոր երաժշտություն փոխանցելու, սկավառակից պատճենելու, գրելու և նվագարկելու համար: Համակարգչային ծրագրակազմը կարելի է ներլցնել հետևյալ կայքից՝ www.music.nokia.com/download:
- Սարքը Bluetooth միացնելիության և համատեղելի USB տվյալների կաբելի միջոցով համակարգչին միացնելու համար օգտագործել PC Suite և Nokia Music Manager: USB տվյալների կաբել օգտագործելու համար որպես միացման ռեժիմ ընտրել PC Suite:
- Սարքը միացրեք համակարգչին՝ օգտագործելով Bluetooth միացնելիություն կամ համատեղելի USB տվյալների կաբել, և երաժշտական ֆայլերը պատճենեք սարքի հիշողության մեջ: USB տվյալների կաբել օգտագործելու համար որպես միացման ռեժիմ ընտրել Տվյալների պահում:
- Օգտագործել Windows Media Player: Միացնել համատեղելի USB տվյալների կաբել և որպես միացման ռեժիմ ընտրել Տպում և միջոցներ:

## Ռադիո

Ձեր սարքը սատարում է Nokia XpressRadio, ինչը թույլ է տալիս լսել ռադիոկայանների հաղորդումները՝ օգտագործելով ներկառուցված ալեհավաք:

Ընտրել Ընտրանք > Ռադիո:

### Ռադիոկայաններ լարելը

**Ռադիոյից օգտվելը**

Օգտագործել ոլորման ստեղնը՝ ցուցասարքի թվացյալ ստեղներին համապատասխան:

Այլապես, օգտագործել երաժշտաստեղները ⏮, ⏯ և ⏭:

**Հաջորդ հասանելի ռադիոկայանը որոնելը**

Սեղմել և պահել ոլորման ստեղնը ձախ կամ աջ:

Այլապես, սեղմել և պահել ⏭ կամ ⏮ երաժշտաստեղները:

**Ռադիոյի հաճախությունը 0.05 ՄՀց քայլերով լարելը**

Արագ սեղմել ոլորման ստեղնը ձախ կամ աջ:

**Ռադիոկայանը հիշողության մեջ պահելը**

Ընտրել Ընտրք > Պահպանել կայանը:

**Ռադիոկայանի անվանումը մուտքագրելը**

Ընտրել Ընտրք > Կայաններ > Ընտրք > Վերանվանել:

**Դեպի պահված այլ ռադիոկայան անցնելը**

Ոլորել վեր կամ վար:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Այլապես, սեղմել ⏭ կամ ⏮ երաժշտաստեղները:

Պահված ռադիոկայանների ցանկից որևէ կայան անմիջապես մուտք գործելու համար սեղմել կայանի համարին համապատասխանող թվային ստեղնը:

**Ձայնի բարձրությունը կարգավորելը**

Օգտագործել ձայնի ուժգնության ստեղները:

**Վերարտադրումն ընդմիջելը կամ վերսկսելը**

Սեղմել ոլորման ստեղնը (■ /▶):

Այլապես, սեղմել ⏯ երաժշտաստեղները:

**Ռադիոն հետին պլանում աշխատեցնելու համար նախադրելը**

Արագ սեղմել «Վերջ» ստեղնը:

**Ռադիոն փակելը**

Սեղմել և պահել «Վերջ» ստեղնը:

Ընտրել Ընտրf որևէ մեկը հետևյալից.

**Որնլ բոլ. կյները** — Ձեր գտնվելու վայրում ինքնաբերաբար որոնել հասանելի ռադիոկայաններ:

**Դնել հնխթն** — Մուտfագրել ռադիոկայանի հաճախականությունը:

**Կայան տղկտու** — Մուտf գործել ռադիոկայանների ցանկ պարունակող կայfէջ:

**Կայաններ** — Ցուցակագրել, վերանվանել կամ վերացնել պահված ռադիոկայանները:

**Ռադիոյի պարամետրեր**

Ընտրել Ընտցնկ > Ռադիո:

Ընտրել Ընտրf > Պարամետրեր որևէ մեկը հետևյալից.

**RDS** — Ցուցադրել ռադիոյի տվյալների համակարգի տեղեկություններ, օրինակ՝ ռադիոկայանի անունը:

**Ինքնհաճախություն** — Թույլատրել, որպեսզի սարքը ինքնաբար փոխի ավելի լավ ընդունվող հաճախականությանը (հասանելի է RDS-ն ակտիվացված լինելու դեպքում):

**Նվագարկումը՝** — Լսել ականջակալով կամ բարձրախոսով:

**Ելf** — Անցում կատարել ստերեո և մոնո ելfերի միջև:

**Ռադիոթեմա** — Ընտրել ռադիոյի տեսքը:

**Ձայնագրանցիչ**

Ձայնագրեf խոսf, ձայներ կամ ակտիվ կանչ և գրանցումները պահպանեf Պատկերասրահում:

Ընտրել Ընտցնկ > Միջոցներ > Ձայնագրանցիչ:

© 2009 Nokia Բոլոր իրավունfները պաշտպանված են: 

Ձայնագրիչը հնարավոր չէ օգտագործել, երբ գործածվում է տվյալների փոխանակման զանգը կամ ակտիվացրած է GPRS ծառայությունը:

●, ▯▯, կամ ■ գրաֆիկականստեղներն օգտագործելու համար ոլորել ձախ կամ աջ:

**Գրանցում սկսելը**

Ընտրել ●, կամ կանչի ընթացքում ընտրել Ընտրք > Գրանցել: Կանչի գրանցման ընթացքում խոսակցության բոլոր կողմերը լսելու են թույլ շարունակական ազդանշան:

**Գրանցումն ընդմիջելը**

Ընտրել ▯▯:

**Գրանցումն ավարտելը**

Ընտրել ■: Գրանցումը պահպանվում է Պատկերասրահի «Գրանցումներ» պահոցում:

Վերջին գրանցումը նվագարկելու կամ ուղարկելու, գրանցումների ցանկ մուտք գործելու կամ գրանցումների պահման հիշողություն և պահոց ընտրելու համար ընտրել Ընտրք և համապատասխան ընտրանքը:

## Հավասարիչ

Մեդիա նվագարկիչն օգտագործելու ընթացքում ձայնը կարգավորելը

Ընտրել Ընտցնկ > Միջոցներ > Հավասարիչ:

**Հավասարիչի կանխորոշված խումբն ակտիվացնելը**

Ոլորել դեպի խումբը և ընտրել Ակտիվացնել:

**Հավասարիչի նոր խումբ ստեղծելը**

1. Ընտրել ցանկի երկու վերջին խմբերից մեկը և Ընտրք > Խմբագրել:
2. Ձայնի ուժգնությունը կարգավորելու համար օգտագործել ոլորման ստեղնը:
3. Պարամետրերը պահելու և խմբի համար անուն մուտքագրելու համար ընտրել Պահպ և Ընտրք > Վերանվանել:

## Ստերեո լայնացում

Ստերեո լայնացումը ստերեո ականջակալ օգտագործելու դեպքում ստեղծում է ավելի լայն ստերեո ձայնային էֆեկտ:

Ընտրել Ընտցնկ > Միջոցներ և Ստերեո լայնցմ:

## Համացանց

Ձեր սարքի զննարկիչով կարող եք մուտք գործել զանազան ինտերնետային ծառայություններ (ցանցային ծառայություն): Ինտերնետային էջերի արտաքին տեսքը կարող է տարբեր լինել՝ էկրանի չափերից կախված: Հնարավոր է, որ չկարողանաք տեսնել ինտերնետային էջերի բոլոր մանրամասները:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

**Կարևոր է.** Օգտվեք միայն այն ծառայություններից, որոնց վստահում եք և որոնք ապահովում են համապատասխան անվտանգություն և պաշտպանություն վնասակար ծրագրերից:

Այս ծառայությունների, գնորոշման և հրահանգների առկայությունը ստուգեք Ձեր ծառայության մատակարարի հետ:

Դուք կարող եք ստանալ զննարկման համար պահանջվող կազմաձևման պարամետրեր՝ որպես կազմաձևման հաղորդագրություն ծառայության մատակարարից:

Ծառայությունը գործարկելու համար ընտրեք Ընտցնկ > Ինտերնետ > Հմցանցի պմտ > Կազմաձևի պրմտ, կազմաձև և հաշիվ:

## Ծառայությանը միանալը

Ծառայության հետ կապ հաստատելու համար ընտրել Ընտցնկ > Ինտերնետ > Հիմնաէջ. կամ սպասման ռեժիմում սեղմել և պահել 0:

Էջանիշ ընտրելու համար ընտրել Ընտցնկ > Ինտերնետ > Էջանիշեր:

Վերջին այցելած URL-ն ընտրելու համար ընտրել Ընտցնկ > Ինտերնետ > Վրջ. հմցնց հսցե:

Ծառայության հասցե մուտքագրելու համար ընտրել Ընտցնկ > Ինտերնետ > Գնալ հասցեով: Մուտքագրել հասցեն և ընտրել OK:

Ծառայության հետ կապ հաստատելուց հետո կարող եք սկսել էջերի զննարկումը: Հեռախոսի ստեղների գործառույթները կարող են տարբերվել՝ տարբեր ծառայությունների դեպքում: Հետևեք հեռախոսի ցուցասարքի վրայի տեքստային հրահանգներին: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Ձեր ծառայություն մատուցողին:

## Համաձայնցի վերբեռնումներ

Վերբեռնված պատկերներ և տեսահոլովակներ դիտելու և պարամետրեր փոխելու համար բացեք Ձեր առցանց համատեղ օգտագործման ծառայության ցանցէջը (ցանցային ծառայություն):

### Առցանց համատեղ օգտագործման ծառայություն բացելը

1 Ընտրել Ընտցնկ > Ինտրնետ > Հմցնց. վերբռնմ և առցանց համատեղ օգտագործման ծառայություն:
2 Ընտրել ծառայության կողմից առաջարկվող հղումներից:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

**Ացցանց համատեղ օգտագործման ծառայության պարամետրեր փոխելը**

1 Ընտրել Ընտցնկ > Ինտրնետ > Հմցնց. վերբոնմ և ացցանց համատեղ օգտագործման ծառայություն:

2 Ընտրել Ընտրf > Պարամետրեր ՝ ծառայության պարամետրերի էջը բացելու համար:

## Արտաքին տեսքի պարամետրեր

Համացանցը զննարկելիս՝ ընտրել Ընտրf > Պարամետրեր և հետևյալ ընտրանքներից.

**Ցուցադրել** — Ընտրել տառաչափը, պատկերների ցուցադրումը և տեքստի ցուցադրման եղանակը:

**Ընդհանուր** — Ընտրել համացանցի հասցեների ուղարկումը որպես Unicode (UTF-8), բովանդակության կոդավորման տեսակը և JavaScript™ -ի միացված լինելը:

Առկա ընտրանքները կարող են տարբեր լինել:

## Հիշապահեստ

Հիշապահեստը հիշողության մի մաս է, որն օգտագործվում է տվյալների ժամանակավոր պահպանման համար: Եթե Դուք փորձել եք օգտվել կամ օգտվել եք գաղտնաբառեր պահանջող գաղտնի տեղեկություններից, օգտվելուց հետո ամեն անգամ դատարկեք հիշապահեստը: Հիշապահեստում են պահպանվում այն տեղեկությունները կամ ծառայությունները, որոնցից օգտվել եք:

Cookie-ն տվյալ է, որը կայքը պահպանում է Ձեր հեռախոսի հիշապահեստում: Cookie-ները պահպանվում են այնքան ժամանակ, քանի դեռ չեք մաքրել հիշապահեստը:

Զննարկելու ընթացքում հիշապահեստը մաքրելու համար ընտրել Ընտրf > Գործիքներ > Մfրել հիշապահեստը:

Հեռախոսով cookie-ների ստացումը թույլատրելու կամ կանխելու համար ընտրել Ընտցնկ > Ինտերնետ > Հմցանցի պմտ > Անվտանգություն > Cookie-ներ. կամ զննարկելու ընթացքում ընտրել Ընտրf > Պարա-մետրեր > Անվտանգություն > Cookie-ներ:

## Զննարկչի անվտանգություն

Անվտանգության միջոցներ կարող են պահանջվել որոշ ծառայությունների համար, ինչպիսիք են բանկային ծառայությունները կամ առցանց գնումներ կատարելը: Այդպիսի միացումների համար Ձեզ հարկավոր են անվտանգության վկայագրեր և, հնարավոր է, անվտանգության համակարգ, որոնք կարող են առկա լինել Ձեր SIM քարտում: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Ձեր ծառայության մատակարարին:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Անվտանգության համակարգի պարամետրերը դիտելու կամ փոխելու, կամ Ձեր սարքի մեջ ներլցված լիազորման կամ օգտագործողի վկայականների ցուցակը դիտելու համար ընտրեք Ընտցնկ > Պարամետրեր > Անվտանգթն > Անվտ. հմկրգի պմտ, Լիազոր. վկայագրեր, կամ Օգտղի վկայականնր:

**Կարևոր է.** Նույնիսկ հաշվի առնելով, որ հավաստագրերի օգտագործումը նշանակալիորեն նվազեցնում է հեռավոր միացություններ ստեղծելու և ծրագրեր տեղադրելու ժամանակ առաջացող վտանգները, դրանք հարկավոր է ճիշտ օգտագործել՝ անվտանգության առավել բարձր մակարդակ ապահովելու համար: Հավաստագրի առկայությունը ինքնըստինքյան որևէ պաշտպանություն չի ընձեռում. հավաստագրերի կառավարիչը պետք է ճիշտ, արժանահավատ կամ վստահելի հավաստագրեր պարունակի՝ անվտանգության առավել բարձր մակարդակ ապահովելու համար: Հավաստագրերն ունեն գործողության սահմանափակ ժամկետ: Եթե ստանում եք «Ժամկետանց հավաստագիր» կամ «Դեռ ուժի մեջ չմտած հավաստագիր» հաղորդագրությունը, նույնիսկ երբ ակնկալվում է, որ հավաստագիրը վավեր է, ստուգեք, թե ճի՞շտ են արդյոք Ձեր սարքի մեջ նշված ամսաթիվն ու ժամը:

Որևէ հավաստագրի տվյալները փոփոխելուց առաջ համոզվեք, որ հավաստագրի սեփականատիրոջն իրոք վստահում եք և որ հավաստագիրն իրոք նշված սեփականատիրոջն է պատկանում:

## Խաղեր և ծրագրեր

Դուք կարող եք կառավարել ծրագրեր և խաղեր: Ձեր հեռախոսում կարող են տեղադրված լինել որոշ խաղեր կամ ծրագրեր: Այդ ֆայլերը պահվում են հեռախոսի կամ դրան միացրած հիշաքարտի հիշողության մեջ. ֆայլերը հնարավոր է դասավորել պահոցներում:

## Ծրագիր գործարկելը

Ընտրել Ընտցնկ > Ծրագրեր > Խաղեր, Հիշաքարտ, կամ Հավաքածու: Ոլորել դեպի խաղը կամ ծրագիրը և ընտրել Բացել:

Խաղի ձայները, լույսերը և ցնցումները կարգավորելու համար ընտրեք Ընտցնկ > Ծրագրեր > Ընտրք > Ծրագրի պրմտ:

Առկա այլ ընտրանքները կարող են ներառել հետևյալը՝

**Թրմցնլ վարկածը** — հաստատելու համար, որ համացանցում (ցանցային ծառայությունում) ներլցման համար առկա է ծրագրի նոր տարբերակ:

**Յանցէջ** — առկայության դեպքում ինտերնետային էջից (ցանցային ծառայություն) ծրագրի վերաբերյալ լրացուցիչ

տեղեկություններ կամ տվյալներ տրամադրելու համար:

**Ծրագրի մուտք** — ծրագրի ցանց մուտք գործելը սահմանափակելու համար:

## Ծրագիր ներլցնելը

Ձեր հեռախոսն ապահովում է J2ME™ Java ծրագրեր: Նախքան ծրագիր ներլցնելը համոզվեք, որ այն համատեղելի է Ձեր հեռախոսի հետ:

**Կարևոր է.** Տեղադրեք և օգտագործեք միայն վստահելի աղբյուրներից ստացված ծրագրեր և ծրագրակազմեր՝ այնպիսիք, ինչպիսիք են Symbian Signed նշագրմամբ կամ Java Verified™ փորձաքննությունն անցած ծրագրերը:

Նոր ծրագրեր և խաղեր կարելի է ներլցնել տարբեր եղանակներով:

- Ընտրել Ընացնկ > Ծրագրեր > Ընտրք > Ներլցումներ > Ծրագրի ներլցումներ կամ **Խաղի ներլցնլք.** ցուցադրվում է առկա էջանիշերի ցանկը:
- Ձեր հեռախոս ծրագրեր ներլցնելու համար օգտագործեք PC Suite-ի Nokia Application Installer-ը:

Տարբեր ծառայությունների ու սակագների առկայությունը պարզելու համար դիմել ծառայություն մատուցողին:

## Քարտեզներ

Կարող եք զննարկել տարբեր քաղաքների և երկրների քարտեզներ, որոնել հասցեներ և տեսարժան վայրեր, պլանավորել մեկ վայրից դեպի մյուսը տանող երթուղիներ, որպես ուղենիշ պահպանել վայրերը և դրանք ուղարկել դեպի համատեղելի սարքեր:

Գրեթե բոլոր թվային քարտեզները պարունակում են որոշակի աստիճանի անճշտություններ և այս կամ այն չափով ամբողջական չեն: Չի կարելի ամբողջովին ապավինել սույն սարքում օգտագործելու համար Ձեր ներլցրած քարտեզներին:

**Ծանուցում.** Բովանդակություն ներլցնելը, ինչպիսիք են քարտեզները, արբանյակային պատկերները, ձայնային ֆայլերը, ուղեցույցները կամ երթևեկի վերաբերյալ տեղեկատվությունը, կարող է պահանջել մեծ քանակությամբ տվյալների փոխանցում (ցանցային ծառայություն):

Բովանդակությունը, ինչպիսիք են արբանյակային պատկերները, ուղեցույցները, եղանակի ու երթևեկի վերաբերյալ տեղեկատվությունը և դրանց առնչվող ծառայությունները, ստեղծվում են Nokia-ից անկախ գործող երրորդ անձանց կողմից: Բովանդակությունը կարող է լինել ոչ ստույգ ու որոշ չափով թերի և կախված են տվյալների

 © 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

անկայունությունից: Չի կարելի ամբողջովին ապավինել վերոհիշյալ բովանդակությանը և դրան առնչվող ծառայություններին:

Քարտեզների մասին մանրամասն տեղեկությունների համար այցելեք www.nokia.com/maps:

Քարտեզներ ծրագիրն օգտագործելու համար ընտրել Ընտցնկ > Կազմակերպիչ > Քարտեզներ և առկա ընտրանքներից.

## Քարտեզներ ներլցնելը

Ձեր սարքի հիշաքարտը կարող է պարունակել նախապես տեղադրված քարտեր: Ինտերնետի միջոցով կարող եք ներլցնել քարտեզների նոր հավաքածու՝ օգտագործելով Nokia Map Loader համակարգչային ծրագրակազմը:

### Nokia Map Loader ներլցնելն ու տեղադրելը

1 Nokia Map Loader-ը համակարգչում ներլցնելու, ինչպես նաև լրացուցիչ հրահանգներ ստանալու համար այցելեք www.maps.nokia.com:

2 Ընտրել Ընտցնկ > Կազմակերպիչ > Քարտեզներ՝ նախնական կազմաձևումը կատարելու համար:

**Քարտեզներ ներլցնելը**

Առաջին անգամ նոր քարտեզներ ներլցնելուց առաջ համոզվել, որ հեռախոսի մեջ մտցրած է հիշաքարտ:

Հիշաքարտի վրա առկա քարտեզների ընտրանին փոխելու, հիշաքարտից բոլոր քարտեզները վերացնելու և նոր ընտրանի ներլցնելու համար օգտագործել Nokia Map Loader-ը՝ ապահովելու, որ բոլոր քարտեզները նույն թողարկման են:

**Քարտեզներ ինքնաբար ներլցնելը**

Ընտրել Ընտցնկ > Կազմակերպիչ > Քարտեզներ և Պարամետրեր > Ցանցի պրմտ > Թ.տ. ցանցի գրծածմ > Այո կամ Տան ցանցում:

**Ինքնաբար ներլցումն ապաակտիվացնելը**

Ընտրել Ոչ:

**Ծանուցում.** Բովանդակություն ներլցնելը, ինչպիսիք են քարտեզները, արբանյակային պատկերները, ձայնային ֆայլերը, ուղեցույցները կամ երթևեկի վերաբերյալ տեղեկատվությունը, կարող է պահանջել մեծ քանակությամբ տվյալների փոխանցում (ցանցային ծառայություն):

## Քարտեզներ և GPS

Ձեր սարքում չկա GPS ներքին ալեհավաք: GPS միացում պահանջող ծրագրեր օգտագործելու համար անհրաժեշտ է օգտագործել արտաքին GPS ընդունիչ (լրասարքը վաճառվում է առանձին): Զուգակցեք GPS ընդունիչը Ձեր սարքի հետ՝ օգտվելով Bluetooth անլար տեխնոլոգիայից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Ձեր GPS սարքի օգտագործողի ուղեցույցին:

Քարտեզներ ծրագրին աջակցելու համար կարող եք օգտագործել Գլոբալ տեղորոշման համակարգը (GPS): Որոշեք Ձեր դիրքը կամ չափեք տարածությունները և գծեք կոորդինատները:

Ձեր սարքը արտաքին GPS ընդունիչի հետ զուգակցելուց հետո կպահանջվի մի քանի րոպե, որպեսզի սարքը ցուցադրի ներկայիս դիրքը:

Գլոբալ Դիրքավորման Համակարգը (GPS) գործարկում է Միացյալ Նահանգների կառավարությունը, որը համակարգի ճշգրիտ աշխատանքի և սպասարկման միակ պատասխանատուն է: Տեղորոշման ճշգրտությունը կարող է փոփոխվել Միացյալ Նահանգների կառավարության կողմից GPS արբանյակների վրա կատարվող փոփոխությունների հետևանքով և ենթակա է փոփոխման՝ ԱՄՆ Պաշտպանության Դեպարտամենտի քաղաքացիական GPS ռազմավարության և Ֆեդերալ ռադիոնավագնացության պլանից կախված: Արբանյակների անհաջող դիրքերում գտնվելը նույնպես կարող է ազդել չափումների ճշտության վրա: Ձեր գտնվելու վայրը, շենքերի ու բնական արգելքների առկայությունը, ինչպես նաև եղանակային պայմանները նույնպես կարող են ազդեցություն ունենալ GPS ազդանշանների առկայության ու որակի վրա: GPS ազդանշանները գուցե հասանելի չլինեն շենքերի ներսում կամ մետրոյում և կարող են թուլանալ բետոնի կամ մետաղի պես նյութերի պատճառով:

GPS համակարգը չպետք է օգտագործվի որպես տեղորոշման ճշգրիտ սարք. ինչպես տեղորոշման, այնպես էլ տարածության մեջ տեղաշարժվելու նպատակով կողմնորոշման համար չպետք է ապավինել բացառապես GPS ընդունիչից և բջջային ռադիոցանցերից ստացված տվյալներին:

## Հավելյալ ծառայություններ

«Քարտեզներ» ծրագիրն հնարավոր է արդիացնել՝ այն դարձնելով նավարկման լրիվ համակարգ, որը կարելի է օգտագործել մեքենա վարելիս կամ զբոսնելիս: Նավարկման լրիվ համակարգի համար անհրաժեշտ է ունենալ տարածաշրջանային լիցենզիա: Մեքենայի նավարկումը ամբողջովին ուղղորդվում է ձայնով և ցուցադրում երկչափ և եռաչափ քարտեզներ: Հետիոտների նավարկման արագությունը սահմանափակված է 30 կմ/ժ-ով (18,6 մղոն/ժ) և չի տրամադրում ձայնով ուղղորդում: Նավարկման ծառայությունը մատչելի է ոչ բոլոր երկրներում և տարածաշրջաններում: Մանրամասների համար այցելեք Nokia տեղական կայքէջը:

 © 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Այս ծառայությունից օգտվելու համար պետք է ունենալ Bluetooth անլար տեխնոլոգիան ապահովող համատեղելի արտաքին GPS ընդունիչ:

**Նավարկման ծառայություն գնելը**

Ընտրել Ընտցնկ > Կազմակերպիչ > Քարտեզ-ներ և Հավելյալ ծառ-ներ > Գնել նավարկում և հետևել հրահանգներին:

Ձայնով ուղղորդվող նավարկումն օգտագործելու համար պետք է թույլ տալ, որ «Քարտեզներ» ծրագիրն օգտագործի ցանցային միացումը:

Նավարկման լիցենզիան կապակցված է Ձեր SIM քարտի հետ: Եթե Ձեր սարք մտցնեք այլ SIM քարտ, նավարկումը սկսելուց առաջ Ձեզնից կպահանջվի լիցենզիա գնել: Գնման գործընթացի ժամանակ Ձեզ կառաջարկվի առկա նավարկման լիցենզիան փոխանցել դեպի նոր SIM քարտ՝ առանց լրացուցիչ վճարի:

## Կազմակերպել

Թող Ձեր հեռախոսը օգնի Ձեր կյանքը կազմակերպելու գործում:

### Կոնտակտներ կառավարելը

Սարքում և SIM քարտում որպես կոնտակտներ պահպանեք անուններ, հեռախոսահամարներ և հասցեներ:

Ընտրել Ընտցնկ > Կոնտակտներ:

**Կոնտակտների համար հիշողություն ընտրելը**

Սարքի հիշողության մեջ հնարավոր է կոնտակտները պահպանել լրացուցիչ մանրամասներով, ինչպիսիք են տարբեր հեռախոսահամարները և տեքստային տարրերը: Սահմանափակ քանակությամբ կոնտակտների համար կարող եք նաև պահպանել պատկեր, ինչերանգ կամ տեսահոլովակ:

SIM քարտի հիշողության մեջ հնարավոր է պահպանել անուններ՝ դրանց կցված մեկ հեռախոսահամարով: SIM քարտի հիշողության մեջ պահպանված կոնտակտները նշվում են -ով:

1 Ընտրել Պարամետրեր > Հիշողն օգտգծվում է՝ Ձեր կոնտակտների համար SIM քարտը, սարքի հիշողությունը կամ երկուսն էլ ընտրելու համար:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

2 Ընտրել Հեռախոս և SIM ՝ երկու հիշողություններից կոնտակտները բերելու համար: Կոնտակտները պահպանելիս դրանք պահպանվում են սարքի հիշողության մեջ:

## Կոնտակտներ կարգավորելը

### Կոնտակտ որոնելը

Ընտրել Ընտցնկ > Կոնտակտներ > Անուններ:

Ոլորել կոնտակտների ցանկով կամ ընտրել կոնտակտի անվան առաջին նիշերը:

### Անվան ու հեռախոսահամարի պահպանումը

Ընտրել Ընտցնկ > Կոնտակտներ > Ավելացնել նորը:

### Որևէ մանրամասն ավելացնելը կամ խմբագրելը

Ընտրել կոնտակտ և Մնրմսն > Ընտրք > Ավելց. մանրամասն:

### Մանրամասնի վերացնելը

Ընտրել կոնտակտ և Մնրմսն: Ընտրել մանրամասն և Ընտրք > Վերացնել:

### Կոնտակտ վերացնելը

Ընտրել կոնտակտ և Ընտրք > Վեր. կոնտակտը:

### Բոլոր կոնտակտները վերացնելը

Ընտրել Ընտցնկ > Կոնտակտներ > Վեր. բոլ. կնտկտ > Հեռ. հիշող-նից կամ SIM քարտից:

## Սարքի և SIM քարտի հիշողությունների միջև կոնտակտների պատճենումն ու տեղափոխումը

### Մեկ կոնտակտի պատճենումը

Ընտրել Ընտրք > Մակնշմ. ընտրանք > Նշել: Նշել այն կոնտակտները, որոնք ցանկանում եք պատճենել կամ տեղափոխել, և ընտրել Ընտրք > Պտճնլ նշվածները կամ Տեղափ. նշվածը:

### Բոլոր կոնտակտների պատճենումը

Ընտրել Ընտցնկ > Կոնտակտներ > Պտճ. կնտկտնր կամ Տեղփ. կնտկտնր:

### Կոնտակտների խումբ ստեղծելը

Դասավորեք կոնտակտները զանգի տարբեր հնչերանգներ և խմբի պատկերներ ունեցող զանգողների խմբերում:

1 Ընտրել Ընտցնկ > Կոնտակտներ > Խմբեր:
2 Ընտրել Ավլցնլ կամ Ընտրք > Ավլցնլ նոր խումբ ՝ նոր խումբ ստեղծելու համար:
3 Մուտքագրել խմբի անունը, ըստ ցանկության ընտրել պատկեր և կանչի հնչերանգ և ընտրել Պահպնել:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

4 Խմբին կոնտակտներ ավելացնելու համար ընտրել խումբը և Դիտել > Ավլցնլ:

## Այցեքարտեր

Դուք կարող եք ուղարկել ու ստանալ որևէ անձի կոնտակտային տվյալներ՝ vCard ստանդարտն ապահովող համատեղելի սարքից:

Այցեքարտ ուղարկելու համար որոնել կոնտակտը և ընտրել Մենյան > Ընտրք > Ուղ. այցեքարտ:

Երբ այցեքարտ եք ստանում, ընտրել Ցյց տալ > Պահպ ՝ այցեքարտը հեռախոսի հիշողության մեջ պահպանելու համար:

## Ամսաթիվ և ժամ

Ժամացույցի տեսակը, ժամը, ժամային գոտին կամ ամսաթիվը փոխելու համար ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Ամսաթիվ և ժամ:

Այլ ժամային գոտի ճանապարհորդելու ժամանակ ընտրել Ընտցնկ > Պարամետրեր > Ամսաթիվ և ժամ > Օրուժամի պրմտ > Ժամային գոտի՝, և Ձեր գտնվելու վայրին համապատասխան ժամային գոտի ընտրելու համար ոլորեք ձախ կամ աջ: Ժամանակն ու ամսաթիվը նախադրվում են ժամային գոտուն համապատասխան և հնարավորություն են տալիս, որ Ձեր հեռախոսը ցուցադրի ստացված տեքստային կամ մուլտիմեդիա հաղորդագրությունների ուղարկման ճիշտ ժամանակը:

Օրինակ՝ GMT -5 ցույց է տալիս Նյու Յորքի (ԱՄՆ) ժամային գոտին՝ Գրինվիչից (Լոնդոն, Մեծ Բրիտանիա) 5 ժամ դեպի արևմուտք:

## Զարթուցիչ

Ցանկալի ժամին ազդանշան հնչեցնելու համար:

### Տագնապ նախադրելը

1 Ընտրեք Ընտցնկ > Կազմակերպիչ > Զարթուցիչ:
2 Ակտիվացնել զարթուցիչը և մուտքագրել տագնապի ժամը:
3 Տարբերվա ընտրված օրերին տագնապը կրկնելու համար ընտրել Կրկնում՝ > Միացված և օրերը:
4 Ընտրել տագնապի ազդանշանը:
5 Որոշել նիրհելու պարապուրդը և ընտրել Պահպնել:

### Տագնապը վերջացնելը

Տագնապի ազդանշանն անջատելու համար ընտրել Վերջ:

Եթե տագնապը հնչի մեկ րոպեի ընթացքում կամ ընտրվի Նիրհել, տագնապը կդադարի նիրհելու պարապուրդի ժամանակամիջոցում, ապա կհնչի կրկին:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

## Օրացույց

Ընտրել Ընտցնկ > Կազմակերպիչ > Օրացույց:

Ընթացիկ օրը շրջանակված է: Եթե օրվա համար նշումներ կան արված, ապա օրը ցույց է տրվում թավ նիշերով: Օրվա նշումները դիտելու համար ընտրել Դիտել: Շաբաթը դիտելու համար ընտրել Ընտրf > Շբթվա դիտում: Բոլոր օրացուցային նշումները վերացնելու համար ընտրել Ընտրf > Վերացնել նշումներ > Բոլոր նշումները:

Օրվան և ժամին վերաբերող պարամետրերը խմբագրելու համար ընտրել Ընտրf > Պարամետրեր և առկա ընտրանfներից: Նշված ժամանակն անցնելուց հետո հին նշումները վերացնելու համար ընտրել Ընտրf > Պարամետրեր > Նշում. ինfնվերացմ և առկա ընտրանfներից:

### Օրացույցում նշում անելը

Ոլորել մինչև ամսաթիվը և ընտրել Ընտրf > Նշում անել: Ընտրել նշումի տեսակը և լրացնել դաշտերը:

## Անելիfների ցանկ

Ձեր անելիfների մասին նշում անելու համար ընտրել Ընտցնկ > Կազմակերպիչ > Անելիfների ցնկ:

Նշում ավելացված չլինելու դեպfում նշում անելու համար ընտրել Ավ. նշ.. հակառակ դեպfում ընտրել Ընտրf > Ավելացնել: Լրացրեf դաշտերը և ընտրեf Պահպ:

Նշումը դիտելու համար ոլորել դեպի այն և ընտրել Դիտել:

## Նշումներ

Նշումներ գրելու և ուղարկելու համար ընտրել Ընտցնկ > Կազմակերպիչ > Նշումներ:

Նշում ավելացված լինելու դեպfում նշում անելու համար ընտրել Ավ. նշ.. հակառակ դեպfում ընտրել Ընտրf > Նշում անել: Գրել նշումը և ընտրել Պահպ:

## Հաշվիչ

Ձեր հեռախոսում առկա է սովորական, գիտական և վարկային հաշվիչ:

Ընտրել Ընտցնկ > Կազմակերպիչ > Հաշվիչ և առկա ընտրանfներից՝ հաշվիչի տեսակը և օգտագործելու հրահանգները:

Սույն հաշվիչը սահմանափակ ճշտություն ունի և նախագծված է պարզ հաշվարկների համար:

## Հետհաշվարկի ժամանակաչափ

### Նորմալ ժամանակաչափ

1 Ժամանակաչափը ակտիվացնելու համար ընտրել Ընտցնկ > Կազմակերպիչ >


© 2009 Nokia Բոլոր իրավունfները պաշտպանված են:

Հետհաշվ. ժմչփ > Նորմ. ժամաչափ, մուտքագրեք ժամանակը և կատարեք նշում, որը կցուցադրվի ժամանակը սպառվելուն պես: Ժամանակը փոխելու համար ընտրել **Փոխել ժամանակը**:

2 Ժամանակաչափը գործարկելու համար ընտրել **Սկսել**:

3 Ժամանակաչափը կանգնեցնելու համար ընտրել **Կանգնեց. ժմչփ**:

**Ինտերվալային ժամանակաչափ**

1 Մինչև 10 ինտերվալով ինտերվալային ժամանակաչափ գործարկելու համար նախ մուտքագրեք ինտերվալները:

2 Ընտրել **Ընտցնկ** > **Կազմակերպիչ** > **Հետհաշվ. ժմչփ** > **Ինտերվալ. ժմչփ**:

3 Ժամանակաչափը գործարկելու համար ընտրել **Գործարկել ժմչփ** > **Սկսել**:

Ընտրելու համար, թե ինչպես ինտերվալային ժամանակաչափը պետք է սկսի հաջորդ ժամանակահատվածը, ընտրել **Ընտցնկ** > **Կազմակերպիչ** > **Հետհաշվ. ժմչփ** > **Պարամետրեր** > **Շարուն. հջրդ ժկհտծ** և առկա ընտրանքներից:

## Վայրկյանաչափ

Օգտագործելով վայրկյանաչափը՝ կարող եք չափել ժամանակը, նշել միջանկյալ ժամանակը կամ շրջանների ժամանակը:

Ընտրել **Ընտցնկ** > **Կազմակերպիչ** > **Վայրկնչափ** և հետևյալ ընտրանքներից.

**Տրոհ. ժամորոշ** — միջանկյալ ժամանակը չափելու համար: Ժամանակն առանց պահպանելու հետադարձելու համար ընտրել **Ընտրք** > **Հետադարձել**:

**Մրցելյթ ժկ չփմ** — շրջանների ժամանակը չափելու համար

**Շարունակել** — հետևի պլանում նախադրված ժամանակը դիտելու համար

**Ց. տալ վերջինը** — եթե վայրկյանաչափը հետադարձված չէ, վերջերս չափված ժամանակը դիտելու համար

**Դիտել ժմնկ** կամ **Վեր. ժմնկները** — պահպանված ժամանակները դիտելու կամ վերացնելու համար

Վայրկյանաչափով ժամանակի չափումը հետին պլանում միացված թողնելու համար սեղմել ավարտիստեղնը:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

# Կանաչ խորհուրդներ

Ահա՛ մի քանի խորհուրդ, թե ինչպես նպաստել շրջակա միջավայրի պաշտպանությանը:

## Խնայեք էներգիան

Մարտկոցը լրիվ լիցքավորելուց և լիցքավորիչը սարքից անջատելուց հետո լիցքավորիչը հանեք նաև պատի վարդակից:

Կարիք չի լինի մարտկոցը հաճախակի լիցքավորել, եթե անեք հետևյալը.

- Փակեք և անջատեք ծրագրերը, ծառայությունները և միացումները, երբ դրանք չեք օգտագործում:
- Թուլացրեք էկրանի պայծառությունը:
- Սարքը նախադրեք այնպես, որ ոչ ակտիվ լինելու որոշակի ժամանակից հետո այն մտնի էներգիայի խնայարարի ռեժիմ, եթե այդ հնարավորությունն առկա է ձեր սարքում:
- Անջատել անհարկի ձայները, օրինակ՝ ստեղնախմբի և կանչի հնչերանգները:

## Վերամշակում

Nokia հեռախոսում առկա նյութերի մեծամասնությունը կարող է վերամշակվել: Իմանալու համար, թե ինչպես վերամշակել Nokia արտադրանքները, այցելեք www.nokia.com/werecycle, կամ, շարժական սարքի դեպքում, www.nokia.mobi/werecycle:

Փաթեթավորումն ու օգտագործողի ուղեցույցները վերամշակման հանձնեք տեղական վերամշակման համակարգում:

## Իմացեք ավելին

Ձեր սարքի բնապահպանական հատկանիշների վերաբերյալ այցելեք www.nokia.com/ecodeclaration:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

### Թվային իրավունքների կառավարում

Բովանդակության սեփականատերերը կարող են թվային իրավունքների կառավարման (DRM) զանազան տեխնոլոգիաներ օգտագործել՝ իրենց մտավոր սեփականությունը, ներառյալ հեղինակային իրավունքները պաշտպանելու համար: DRM-ով պաշտպանված բովանդակություն մուտք գործելու համար այս սարքն օգտագործում է տարբեր տեսակի DRM ծրագրակազմեր: Այս սարքով հնարավոր է մուտք գործել WMDRM 10, OMA DRM 1.0, OMA DRM 1.0 forward lock և OMA DRM 2.0-ով պաշտպանված բովանդակություն: Եթե որոշակի DRM ծրագիր բովանդակությունը չի պաշտպանում, բովանդակության սեփականատերերը կարող են պահանջել, որպեսզի այդ DRM ծրագրով նոր DRM պաշտպանությամբ բովանդակությունից օգտվելու հնարավորությունը դադարեցվի: Դադարեցումը կարող է նաև արգելել Ձեր սարքում արդեն իսկ տեղադրված՝ DRM-ով պաշտպանված բովանդակության վերականգնումը: Այդպիսի DRM ծրագրակազմի դադարեցումը չի ազդում այլ տեսակի DRM-ներով պաշտպանված բովանդակության կամ DRM-ով չպաշտպանված բովանդակության օգտագործման վրա:

Թվային իրավունքների կառավարման (DRM) միջոցով պաշտպանված բովանդակության հետ միասին տրվում է համապատասխան լիցենզիա, որը սահմանում է բովանդակությունից օգտվելու Ձեր իրավունքները:

Եթե ձեր սարքի վրա OMA DRM-ով պաշտպանված բովանդակություն կա, լիցենզիայի և բովանդակության պահեստային օրինակ ստեղծելու համար օգտագործեք Nokia PC Suite-ի համապատասխան ֆունկցիոնալ հնարավորությունը:

Հնարավոր է, որ փոխանցման այլ եղանակներ չփոխանցեն լիցենզիան, որի վերականգնումը՝ բովանդակության հետ միասին, անհրաժեշտ է, որպեսզի կարողանաք շարունակել OMA-DRM-ով պաշտպանված բովանդակության օգտագործումը՝ սարքի հիշողության ֆորմատավորումից հետո: Լիցենզիան վերականգնելու անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև սարքի վրա գտնվող ֆայլերի վնասվելու դեպքում:

Եթե Ձեր սարքի վրա WMDRM-ով պաշտպանված բովանդակություն կա, լիցենզիան ու բովանդակությունը կկորչեն սարքի հիշողությունը ֆորմատավորելու դեպքում: Հնարավոր է նաև, որ սարքի վրա գտնվող ֆայլերի վնասման հետևանքով կորցնեք լիցենզիան ու բովանդակությունը: Լիցենզիայի կամ բովանդակության կորուստը կարող է սահմանափակել Ձեր սարքի վրա նույն բովանդակությունից նորից օգտվելու հնարավորությունը: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ծառայություն մատուցողին:

Որոշ լիցենզիաներ կարող են միացված լինել հատուկ SIM քարտի, և պաշտպանված բովանդակությունից հնարավոր կլինի օգտվել միայն այն դեպքում, եթե տվյալ SIM քարտը մտցված լինի սարքի մեջ:

### Երրորդ կողմի ծրագրեր

Ձեր սարքի հետ տրամադրվող երրորդ անձանց պատկանող ծրագրերը կարող են ստեղծված լինել և պատկանել Nokia-ի հետ փոխկապակցված կամ կապված անձ չհամարվող անձանց կամ կազմակերպություններին: Երրորդ անձանց ծրագրերի նկատմամբ հեղինակային կամ մտավոր սեփականության իրավունքները Nokia-ին չեն պատկանում: Ուստի, Nokia-ն պատասխանատվություն չի կրում այդ ծրագրերի աշխատանքի, օգտագործողին՝ դրանց հետ կապված օժանդակություն մատուցելու, կամ դրանց մեջ պարունակվող տեղեկատվության համար: Nokia-ն երրորդ անձանց պատկանող ծրագրերի համար որևէ երաշխիք չի տրամադրում:

ԾՐԱԳՐԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՎ՝ ԴՈՒՔ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՔ, ՈՐ ԱՅԴ ԾՐԱԳՐԵՐԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ ԵՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՀԻՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿՈՒՄ ԱՌԱՆՑ ՈՐԵՎԷ ԵՐԱՇԽԻՔԻ՝ ԲԱՑԱՀԱՅՏ ԿԱՄ ԵՆԹԱԴՐՅԱԼ, ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՍ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ: ԴՈՒՔ ՆԱԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՔ, ՈՐ NOKIA-Ն ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԻՆՔ ԲԱՑԱՀԱՅՏ ԿԱՄ ԵՆԹԱԴՐՅԱԼ ՈՉ ՄԻ ԵՐԱՇԽԻՔ ԿԱՄ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ, ՆԵՐԱՌՅԱԼ, ԲԱՅՑ ՈՉ ՄԻԱՅՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ, ՎԱՃԱՌՔԻ ԿԱՄ ԱՅՍ ԿԱՄ ԱՅՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆԸ, ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ, ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՉԽԱԽՏԵԼՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ՈՒ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

## Լրասարքեր

**Ուշադրություն.**
Գործածեք բացառապես տվյալ մոդելի հետ օգտագործելու համար Nokia-ի կողմից հաստատագրված մարտկոցներ, լիցքավորիչներ և լրասարքեր: Ցանկացած այլ տեսակների օգտագործումը կարող է անվավեր դարձնել հաստատումները կամ երաշխիքները և վտանգավոր լինել: Մասնավորապես, հաստատում չստացած լիցքավորիչների կամ մարտկոցների շահագործումը կարող է հրդեհի, պայթյունի, արտահոսքի կամ այլ վտանգավոր իրադրության պատճառ դառնալ:

Nokia-ի կողմից հաստատագրված լրասարքերի առկայությունը պարզելու համար դիմեք Ձեր գործակալին: Լրասարքերի հոսանքի լարն անջատելիս բռնեք և քաշեք խրոցը, այլ ոչ թե լարը:

### Մարտկոց

**Տեղեկություններ մարտկոցի և լիցքավորիչի վերաբերյալ**

Ձեր սարքը սնուցվում է վերալիցքավորվող մարտկոցից: Այս սարքի հետ օգտագործման համար նախատեսված մարտկոցն է՝ BL-4CT: Nokia-ն կարող է այս սարքի համար մարտկոցների լրացուցիչ մոդելներ արտադրել: Սույն սարքը նախատեսված է հետևյալ լիցքավորիչներով օգտագործվելու համար. AC-8: Խրոցակի տեսակից կախված՝ լիցքավորիչի մոդելի ստույգ համարը կարող է տարբեր լինել: Խրոցակի տեսակը նույնականացվում է ստորև նշվածներից որևէ մեկով. E, EB, X, AR, U, A, C, K կամ UB:

Մարտկոցը կարելի է հարյուրավոր անգամներ լիցքավորել և լիցքաթափել, բայց ի վերջո այն կենթարկվի բնականոն մաշվածության: Երբ նկատեք, որ խոսակցության և սարքի՝ սպասելու ռեժիմում գտնվելու ժամանակահատվածները սովորականից նկատելիորեն ավելի կարճ են դարձել, ապա փոխեք մարտկոցը: Օգտագործեք միայն այս սարքի համար նախատեսված և Nokia-ի կողմից հաստատված մարտկոցներ ու լիցքավորիչներ դրանք լիցքավորելու համար:

Մարտկոցն առաջին անգամ օգտագործելու կամ երկար ժամանակ չօգտագործելու դեպքում կարող է անհրաժեշտ լինել նախ միացնել լիցքավորիչը, ապա անջատել այն և նորից միացնել՝ մարտկոցի լիցքավորումը սկսելու համար: Եթե մարտկոցը ամբողջովին լիցքաթափված է, կարող է մի քանի րոպե պահանջվել, մինչև լիցքավորման նշանը հայտնվի էկրանին, կամ հնարավոր լինի զանգեր կատարել:

Անվտանգ հանում: Մարտկոցը հանելուց առաջ սարքը միշտ անջատեք և լիցքավորիչից զատեք:

Պատշաճ լիցքավորում: Երբ լիցքավորիչը չի օգտագործվում, անջատեք այն հոսանքի վարդակից և սարքից: Ամբողջությամբ լիցքավորված մարտկոցը լիցքավորիչին միացված մի թողեք, քանի որ գերլիցքավորումը կարող է կրճատել մարտկոցի շահագործման ժամկետը: Չօգտագործվելու դեպքում ամբողջությամբ լիցքավորված մարտկոցը ժամանակի ընթացքում լիցքաթափվում է:

Խուսափեք ծայրահեղ բարձր կամ ցածր ջերմաստիճաններից: Աշխատեք մարտկոցը պահել 15°C մինչև 25°C (59°F և 77°F) ջերմաստիճանում: Ծայրահեղ բարձր կամ ցածր ջերմաստիճանները նվազեցնում են մարտկոցի հզորությունը և կրճատում շահագործման ժամկետը: Տաք կամ սառը մարտկոցով սարքը կարող է ժամանակավորապես չաշխատել: Մարտկոցի աշխատանքը հատկապես սահմանափակ է զրոյից ցածր ջերմաստիճաններում:

Կարճ միացում մի ստեղծեք: Պատահական կարճ միացում կարող է առաջանալ, եթե մետաղական որևէ իր, օրինակ՝ մետաղադրամ, ամրակ, կամ գրիչ, ուղիղ միացություն ստեղծի մարտկոցի դրական (+) և բացասական (-) հպակների միջև: (Դրանք մարտկոցի վրա մետաղական շերտերի տեսք ունեն): Սա կարող է տեղի ունենալ, օրինակ, երբ դուք պահեստային մարտկոցը գրպանում կամ դրամապանակում եք պահում: Հպակների կարճ միացումը կարող է վնասել մարտկոցը կամ իրը, որը կարճ միացում է առաջացրել:

Թափոնների հեռացում: Մարտկոցը կրակի մեջ մի գցեք, քանի որ այն կարող է պայթել: Մարտկոցները դեն գցելիս գործեք տեղական իրավական ակտերի համաձայն: Եթե հնարավոր է, մարտկոցը հանձնեք՝ նյութերը կրկին օգտագործելու համար: Մարտկոցը դեն մի նետեք որպես կենցաղային աղբ:

Արտահոսք: Էլեմենտները կամ մարտկոցները չպետք է կազմատել, կտրել, բացել, փշրել, ճկել, ծակել կամ կտրատել: Արտահոսքի դեպքում թույլ մի տվեք, որ մարտկոցի հեղուկը մաշկին կամ աչքերին


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

դիպչի: Եթե դա պատահի, վնասված մակերեսներն անմիջապես ջրով լվացեք կամ դիմեք բժշկի օգնությանը:

Վնասվածք: Մարտկոցը չի կարելի ձևափոխել, վերամշակել: Չի կարելի փորձել օտար առարկաներ մտցնել մարտկոցի մեջ, այն ընկղմել ջրի կամ այլ հեղուկների մեջ կամ ենթարկել այդպիսի ազդեցության: Վնասվելու դեպքում մարտկոցները կարող են պայթել:

Ճիշտ գործածում: Մարտկոցն օգտագործեք միայն իր նպատակային նշանակությամբ: Մարտկոցի սխալ օգտագործումը կարող է հրդեհի, պայթյունի կամ այլ վտանգավոր իրադրության պատճառ դառնալ: Եթե սարքը կամ մարտկոցը վայր եք գցել, հատկապես՝ պինդ մակերևույթի վրա, և կարծում եք, որ մարտկոցը վնասվել է, նախքան օգտագործումը շարունակելը այն տարեք սպասարկման կենտրոն՝ զննման համար: Վնասված լիցքավորիչ կամ մարտկոց մի օգտագործեք: Մարտկոցը փոքր երեխաներից հեռու պահեք:

**Nokia մարտկոցի իսկությունը ստուգելու ուղեցույց**

Ձեր ապահովության համար օգտագործեք միայն Nokia-ի բնօրինակ մարտկոցներ: Համոզված լինելու համար, որ Դուք Nokia-ի բնօրինակ մարտկոց եք ձեռք բերում, այն գնեք Nokia-ի լիազորված սպասարկման կենտրոնից կամ գործակալից և ստուգեք հոլոգրամային պիտակը՝ կատարելով հետևյալ քայլերը.

**Ստուգեք հոլոգրամը**

1 Պիտակի վրայի հոլոգրամը դիտելիս պետք է մի անկյան տակ տեսնեք Nokia ձեռքերը միացնող նշանը, և մեկ այլ անկյան տակ նայելիս՝ Nokia Original Enhancements պատկերանշանը:



2 Հոլոգրամը ձախ, աջ, ներքև և վերև թեքելիս դուք պետք է նրա կողմերի վրա տեսնեք համապատասխանաբար 1, 2, 3 և 4 կետ:



Բոլոր չորս քայլերը հաջողությամբ ավարտելը լիովին չի երաշխավորում մարտկոցի գործարանային լինելու փաստը: Եթե չեք կարող հաստատել մարտկոցի իսկությունը կամ պատճառներ ունեք կասկածելու, որ պիտակի վրա հոլոգրամ ունեցող Ձեր Nokia մարտկոցն իսկական Nokia մարտկոց չէ, խուսափեք այն օգտագործելուց և տարեք Nokia-ի մոտակա լիազոր սպասարկման կենտրոն կամ վաճառքի գործակալի մոտ՝ համապատասխան աջակցություն ստանալու համար:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Գործարանային Nokia մարտկոցների մասին լրացուցիչ տեղեկությունների համար՝ տե՛ս www.nokia.com/battery:

**Խնամք և սպասարկում**

Ձեր սարքը բարձրակարգ նախագծման և հմտության արդյունք է, և այն պետք է խնամքով օգտագործել: Հետևյալ խորհուրդները կօգնեն Ձեզ ուժի մեջ պահել արտադրողի երաշխիքը:

- Սարքը չոր պահեք: Տեղումները, խոնավությունը և հեղուկների բոլոր տեսակները կարող են տարրեր պարունակել, որոնք կարող են հանգեցնել էլեկտրոնային սխեմաների քայքայմանը: Եթե սարքը թրջվել է, մարտկոցը հանեք և նորից տեղադրելուց առաջ սպասեք, մինչև սարքը ամբողջովին չորանա:
- Սարքի վրա գտնվող ոսպնյակները (տեսախցիկի, հեռավորության չափիչի, լուսընդունիչի և այլն) մաքրելու համար փափուկ, մաքուր, չոր շոր օգտագործեք:
- Սարքը չի կարելի փոշոտ, կեղտոտ վայրերում պահել կամ օգտագործել: Շարժական մասերն ու էլեկտրոնային բաղադրամասերը կարող են վնասվել:
- Սարքը չի կարելի պահել բարձր ջերմաստիճանի պայմաններում: Բարձր ջերմաստիճանները նվազեցնում են էլեկտրոնային սարքերի շահագործման ժամկետը, վնասում մարտկոցները, ծռմռում կամ հալեցնում պլաստմասսայե որոշ տարրեր:
- Սարքը չի կարելի պահել ցածր ջերմաստիճանի միջավայրում: Երբ այն վերադառնում է բնական ջերմաստիճանի, սարքի ներսում կարող է խոնավություն հավաքվել և վնասել էլեկտրոնային տպատախտակները:
- Մի փորձեք բացել սարքը այլ կերպ, քան նկարագրված է սույն ուղեցույցում:
- Սարքը վայր մի գցեք, մի ցնցեք, հարվածի մի ենթարկեք: Կոպիտ վերաբերմունքը կարող է կոտրել ներքին տպատախտակները և մեխանիկական նուրբ բաղադրամասերը:
- Սարքը մաքրելիս մի օգտագործեք ուժեղ քիմիական նյութեր, մաքրող լուծիչներ կամ ուժեղ ներգործության մաքրող նյութեր:
- Սարքը չի կարելի ներկել: Ներկը կարող է խցանվել շարժական մասերի միջև՝ խափանելով սարքի պատշաճ աշխատանքը:
- Միայն սարքի հետ մատակարարված կամ հաստատագրված ալեհավաք օգտագործեք: Չհաստատագրված, փոփոխված կամ կցորդված ալեհավաքները կարող են վնասել սարքը և խախտել ռադիոսարքերի օգտագործումը կանոնակարգող օրենքները:
- Լիցքավորիչը միայն սենյակում կամ բնակարանում օգտագործեք:
- Միշտ պատրաստեք այն տեղեկությունների պահեստային օրինակները, որոնք ցանկանում եք պահպանել, օրինակ՝ կոնտակտային տվյալներ և օրացուցային նշումներ:
- Ժամանակ առ ժամանակ սարքի աշխատանքը բարելավելու նպատակով սարքը ելման վիճակի բերեք՝ այն անջատելով և մարտկոցը հանելով:

Այս խորհուրդները հավասարապես վերաբերում են Ձեր սարքին, մարտկոցին, լիցքավորիչին և բոլոր լրասարքերին: Եթե սարքերից որևէ մեկը պատշաճ չի գործում, նորոգման համար այն տարեք լիազոր սպասարկման մոտակա կետ:

**Վերամշակում**

Ձեր օգտագործած էլեկտրոնային արտադրանքները, մարտկոցները և փաթեթավորման նյութերը միշտ վերադարձրեք հատուկ դրանց համար նախատեսված հավաքման կետ: Այս կերպ Դուք կօգնեք կանխել թափոնների չվերահսկվող հեռացումը և կնպաստեք նյութական պաշարների վերաօգտագործմանը: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ արտադրանքի մանրածախ վաճառակետից, թափոնների հեռացման համար պատասխանատու տեղական իշխանության մարմիններից, ազգային արտադրողների գործունեության համար պատասխանատու կազմակերպություններից կամ Nokia-ի տեղական ներկայացուցչությունից: Տեղեկանալու համար, թե ինչպես վերամշակել Nokia արտադրանքները, այցելեք www.nokia.com/werecycle ցանցէջը կամ, եթե բջջային սարքով եք զննարկում՝ www.nokia.mobi/werecycle:


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:



Արտադրանքի, մարտկոցի, տպագիր նյութերի կամ փաթեթավորման վրա խաչանշված անվավոր աղբարկղի պատկերը հիշեցնում է, որ բոլոր էլեկտրական և էլեկտրոնային արտադրանքները, մարտկոցները և կուտակիչները, իրենց շահագործման ժամկետի ավարտից հետո, պետք է հանձնվեն հատուկ ընդունման կետերին: Այս պահանջը գործում է Եվրամիության տարածքում: Դեն մի նետեք այս նշանով պիտակավորված արտադրանքը` որպես չտեսակավորված կենցաղային աղբ: Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար՝ տե՛ս արտադրանքի Էկո-Հայտարարագրերը www.nokia.com/environment կայքում:

### Անվտանգության համար լրացուցիչ տեղեկություններ

**Ծանուցում.** Սույն սարքի մակերևույթի ծածկապատումը նիկել չի պարունակում: Սույն սարքի մակերևույթը պարունակում է չժանգոտող պողպատ:

### Մագնիսներ և մագնիսական դաշտեր

Ձեր սարքը հեռու պահեք մագնիսներից և մագնիսական դաշտերից:

### Փոքր երեխաներ

Ձեր սարքը կամ իր լրասարքերը խաղալիք չեն: Դրանք կարող են փոքր մասեր պարունակել: Դրանք փոքր երեխաներից հեռու պահեք:

### Գործարկման միջավայրը

Սույն սարքը բավարարում է ՌՀ ճառագայթման պահանջներին, եթե օգտագործվում է նորմալ դիրքում՝ ականջի մոտ, կամ երբ տեղակայված է մարմնից առնվազն 1.5 սանտիմետր (5/8 դյույմ) հեռավորության վրա: Տեղափոխման պայուսակը, գոտու ամրակը կամ սարքը մարմնի վրա շահագործելու համար նախատեսված որևէ կրիչ չպետք է մետաղ պարունակի և պետք է սարքը մարմնից նշված հեռավորության վրա պահի:

Տվյալներ պարունակող ֆայլեր կամ հաղորդագրություններ ուղարկելը ցանցի հետ որակյալ կապ է պահանջում: Տվյալների ֆայլերի կամ հաղորդագրությունների ուղարկումը կարող է հետաձգվել, մինչև այդպիսի կապը առկա լինի: Մինչև տվյալների փոխանցման ավարտը կատարեք հեռավորությանը վերաբերող հրահանգները:

### Բժշկական սարքավորումներ

Ռադիոհաղորդիչ սարքավորման աշխատանքը` ներառյալ անլար հեռախոսները, կարող է խանգարել բավարար պաշտպանություն չունեցող բժշկական սարքների աշխատանքին: Խորհրդակցեք բժշկի կամ բժշկական սարքավորման արտադրողի հետ՝ պարզելու համար, թե արդյո՞ք այդ սարքերը բավարար պաշտպանություն ունեն ռադիոհաճախության արտաքին էներգիայից: Անջատե՛ք Ձեր սարքը, եթե փակցված կանոնները հրահանգում են այդպես վարվել: Հնարավոր է, որ հիվանդանոցներն ու առողջապահական հաստատությունները ռադիոհաճախության արտաքին էներգիայի նկատմամբ զգայուն սարքավորումներ օգտագործեն:

### Իոնային ներկալման եղանակով պատրաստված բժշկական սարքավորումներ

Բժշկական սարքավորումներ արտադրողները խորհուրդ են տալիս առնվազն 15.3 սանտիմետր (6 դյույմ) տարածություն պահպանել անլար սարքի և փոխպատվաստված բժշկական սարքավորումների միջև (ինչպիսիք են սրտի ռիթմավարը կամ սրտամկանի թելիկախաղը վերացնող էլեկտրական սարքը)` բժշկական սարքի աշխատանքի հնարավոր խաթարումից խուսափելու համար: Այդպիսի սարքավորումներ կրող անձինք պետք է.

- Անլար սարքը միշտ ավելի քան 15.3 սանտիմետր (6 դյույմ) հեռու պահեն բժշկական սարքից:
- Սարքը չպահեն ծոցագրպանում:
- Անլար սարքը պահեն բժշկական սարքավորման նկատմամբ հակառակ ականջի մոտ:
- Անջատեն անլար սարքը, եթե այդպիսի ազդեցության առկայությունը ենթադրելու հիմքեր կան:
- Հետևեն արտադրողի՝ փոխպատվաստված բժշկական սարքավորման վերաբերյալ ցուցումներին:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ձեր անլար սարքը բժշկական սարքավորման հետ օգտագործելու վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում խորհրդակցեք Ձեզ բժշկական ծառայություններ մատուցող անձի հետ:

**Լսողական օժանդակ սարքեր**

Թվային անլար որոշ սարքեր կարող են խանգարել որոշ լսողական օժանդակ սարքերի աշխատանքին:

**Ավտոմեքենաներ**

Ռադիոհաճախության ազդանշանները կարող են ազդել ավտոմեքենաներում սխալ տեղակայված կամ ոչ պատշաճ կերպով պաշտպանված էլեկտրոնային համակարգերի վրա (վառելիքի էլեկտրոնային ներարկման, էլեկտրոնային հակախաթարման արգելակային, արագության կառավարման էլեկտրոնային և անվտանգության բարձիկների համակարգեր): Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Ձեր մեքենայի կամ սարքավորանքի արտադրողին:

Միայն որակավորված անձնակազմը պետք է սպասարկի սարքավորումները կամ դրանք տեղադրի ավտոմեքենայի մեջ: Սխալ տեղադրումը կամ սպասարկումը կարող է վտանգավոր լինել և անվավեր դարձնել սարքի երաշխիքը: Պարբերաբար ստուգեք, որ Ձեր ավտոմեքենայում տեղադրված անլար բոլոր սարքավորումները պատշաճորեն ամրացված և սարքին լինեն: Սարքի, դրա մասերի կամ լրասարքերի հետ նույն խցիկում չի կարելի դյուրավառ հեղուկներ, գազեր կամ պայթուցիկ նյութեր պահել: Հիշեք, որ անվտանգության բարձիկները մեծ ուժով են փչվում: Ձեր սարքը կամ լրասարքերը մի՛ տեղադրեք անվտանգության բարձիկի բացման տարածքում:

Անջատեք Ձեր սարքը օդանավ բարձրանալուց առաջ: Օդանավում անլար հեռահաղորդակցության սարքերի օգտագործումը կարող է օդանավի աշխատանքի համար վտանգ ներկայացնել և հակաիրավական լինել:

**Հնարավոր պայթյունավտանգ միջավայրեր**

Սարքն անջատեք հնարավոր պայթյունավտանգ միջավայրերում: Հետևեք բոլոր փակցված հրահանգներին: Նման վայրերում կայծը կարող է պայթյունի կամ հրդեհի հանգեցնել, ինչը կարող է պատճառել մարմնական վնասվածքներ և մահ: Սարքն անջատեք վառելիքի լցակայաններում: Հետևեք սահմանափակումներին վառելանյութի պահեստավորման և բաշխման վայրերում, քիմիական գործարաններում կամ այն վայրերում, որտեղ պայթեցման աշխատանքներ են կատարվում: Հնարավոր պայթյունավտանգ միջավայր ունեցող տարածքները սովորաբար, բայց ոչ միշտ, հստակորեն նշված են լինում: Դրանք ներառում են այն վայրերը, որտեղ խորհուրդ է տրվում ավտոմեքենայի շարժիչն անջատել, ինչպես նաև նավերում տախտակամածի տակ գտնվող տարածքները, քիմիական նյութերի տեղափոխման կամ պահեստավորման վայրերն ու այն տարածքները, որտեղ օդը պարունակում է քիմիական նյութեր կամ մասնիկներ, ինչպիսիք են ավազահատիկը, փոշին կամ մետաղափոշին: Դուք պետք է ստուգեք հեղուկ գազով (օրինակ՝ պրոպանով կամ բութանով) աշխատող ավտոմեքենաներ արտադրողների հետ, թե արդյո՞ք այս սարքը կարելի է անվտանգ օգտագործել դրանց մոտակայքում:

**Արտակարգ իրավիճակների հեռախոսազանգեր**

**Կարևոր է.** Սույն սարքը գործում է ռադիոազդանշանների, անլար և փիքսված հեռախոսացանցերի, ինչպես նաև օգտագործողի կողմից ծրագրավորվող գործառույթների միջոցով: Եթե Ձեր սարքն ինտերնետով ձայնային կանչի հնարավորություն է տալիս (ինտերնետային զանգեր), ակտիվացրեք և՛ ինտերնետային զանգերը, և՛ բջջային հեռախոսը: Եթե երկուսն էլ ակտիվացված են, ապա հնարավոր է, որ սարքը փորձի արտակարգ իրավիճակների կանչ կատարել և՛ բջջային ցանցի, և՛ Ձեզ ինտերնետային կանչի ծառայություններ տրամադրողի միջոցով: Բոլոր դեպքերում չէ, որ միացումները կարող են երաշխավորված լինել: Կարևոր դեպքերում, օրինակ՝ բժշկական շտապօգնություն կանչելու անհրաժեշտության դեպքում, չի կարելի հույսն ամբողջովին անլար սարքի օգտագործման վրա դնել:

Արտակարգ իրավիճակներում զանգահարելու համար հարկավոր է անել հետևյալը.

1 Եթե սարքը միացված չէ, միացրեք այն: Համոզվեք, որ ազդանշանի հզորությունը բավարար է: Ձեր սարքից կախված՝ գուցե կարիք լինի կատարել հետևյալը.

- Մտցրեք SIM քարտը, եթե սարքն այդպիսի քարտ օգտագործում է:

 © 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

- Վերացրեք կանչերի վրա դրված որոշ սահմանափակումներ, որոնք ակտիվացրել եք Ձեր սարքում:
- Փոխեք սարքի աշխատանքային ռեժիմը՝ օֆլայն կամ թռիչքային ռեժիմից անցնելով ակտիվ ռեժիմի:

2 Սեղմեք «Վերջ» ստեղնը այնքան անգամ, որքան անհրաժեշտ է էկրանը մաքրելու և սարքը հեռախոսազանգ կատարելու համար պատրաստ վիճակի բերելու համար:

3 Մուտքագրեք Ձեր գտնվելու վայրի՝ արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնի պաշտոնական հեռախոսահամարը: Արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնների համարները կարող են, գտնվելու վայրից կախված, տարբեր լինել:

4 Սեղմեք զանգահարելու ստեղնը:

Արտակարգ իրավիճակների հեռախոսազանգի ժամանակ անհրաժեշտ բոլոր տեղեկությունները հնարավորինս ճշգրիտ հաղորդեք: Հնարավոր է, որ դեպքի վայրում Ձեր անլար սարքը կապի միակ միջոցը լինի: Հեռախոսազանգը մի ընդհատեք մինչև թույլտվություն չստանաք:

**Տեղեկություններ հավաստագրման մասին (SAR)**

**Սույն շարժական սարքը համապատասխանում է ռադիոճառագայթմանը վերաբերող ուղեցույցներին**

Ձեր շարժական սարքը ռադիոհաղորդիչ և ընդունիչ սարք է: Այն նախագծված է այնպես, որպեսզի չգերազանցի ռադիոճառագայթների ազդեցության միջազգային ուղեցույցներով սահմանված սահմանափակումները: Այդ ուղեցույցները մշակվել են ICNIRP անկախ գիտական կազմակերպության կողմից և ներառում են այն թույլատրելի սահմանները, որոնք մշակված են բոլոր մարդկանց պաշտպանվածությունը ապահովելու համար՝ անկախ նրանց տարիքից կամ առողջական վիճակից:

Ռադիոճառագայթմանն առնչվող ուղեցույցները շարժական սարքերի համար օգտագործում են կլանման տեսակարար կշռի (ԿՏԿ կամ SAR) կոչվող չափման միավորը: ICNIRP ուղեցույցում նշված SAR-ի սահմանային արժեքը միջինացված հյուսվածքային 10 գրամի վրա կազմում է 2.0 վատտ/կիլոգրամ (Վտ/կգ): SAR-ի չափման փորձերը կատարվել են օգտագործման ստանդարտ դիրքում, երբ սարքը հաղորդում է հաստատված ամենաբարձր հզորության մակարդակով՝ ստուգվող բոլոր հաճախությունների տիրույթներում: Գործող սարքի իրական SAR-ի մակարդակը կարող է առավելագույն արժեքից ցածր լինել, քանի որ այն նախագծված է այնպես, որ օգտագործի ցանցին միանալու համար անհրաժեշտ հզորությունը միայն: Այս արժեքը փոփոխվում է մի շարք գործոններից կախված, մասնավորապես՝ այն բանից, թե ցանցի հաղորդակայանից ինչ հեռավորության վրա եք գտնվում:

Համաձայն ICNIRP ուղեցույցի՝ սարքը ականջի մոտ օգտագործելու դեպքում SAR-ի առավելագույն արժեքը չպետք է գերազանցի 0.73 Վտ/կգ:

Լրասարքերի օգտագործումը կարող է SAR-ի տարբեր արժեքների հանգեցնել: SAR-ի արժեքները կարող են տարբեր լինել՝ կախված հաշվետվությունների և չափումների ազգային պահանջներից և ցանցի հաճախականության տիրույթից: SAR-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող են տրամադրվել www.nokia.com ինտերնետային կայքում` համապատասխան արտադրանքի տեղեկատվական էջում:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

# Ցուցիչ

## Պայմանանշաններ կամ թվեր

cookie-ներ 56
GPS (գլոբալ տեղորոշման համակարգ) 59
microSD քարտը 8
My Nokia 19
nokia software updater 19
Nokia աջակցության տեղեկություններ 18
PC Suite 29
PictBridge 28
PIN 13
PUK 13
SIM
— ծառայություններ 30
SIM հաղորդագրություններ 30
SIM քարտ 7, 17
UPIN 13
USB տվյալների կաբել 28

## Ա

ականջակալ 10
ակնթարթային հաղորդագրությունների փոխանակում 41
ԱՀ 41
ԱՀ (ակնթարթային հաղորդագրությունների փոխանակում) 41, 42, 44
ԱՀ (ակնթարթային հաղորդագրում) 44
այցեքարտեր 63
անվտանգության կոդ 13
անվտանգության մոդուլ 13
անվտանգության պարամետրեր 22
աջակցության ռեսուրսներ 18
առցանց համատեղ օգտագործում 55
արագ համարահավաք 34
արագ համարհավաք 25, 33
արգելող նշանաբառ 13

## Բ

բաժանորդի id 35
բարձրախոս 33

## Գ

գործարանային պարամետրեր, վերականգնում 21

## Դ

դիրքի մասին տվյալներ 30
դյուրանցումներ 15, 25

## Ե

երաժշտություն 51

## Զ

զարթուցիչ 63
զննարկիչ 54
զրույցի ծառայություններ (ԱՀ) 44

 © 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Է

էլ-նամակ, կարդալը և պատասխանելը 43
էլ-նամակ, կցուրդներ 43
էլ-նամակ, ստեղծելը 43
էլփոստ 42, 44
էկրանի պահպանիչ 24

## Թ

թարմացումներ 19
թեմաներ 24
Թռիչքային պրոֆիլ 22
թռիչքային պրոֆիլ 17
թվային իրավունքներ 67
թվային ռեժիմ 35

## Ի

ինտերնետ 54
ինֆո հաղորդագրություններ 30

## Լ

լեզվի պարամետրեր 21
լույսեր 24
լուսանկարներ 46

## Խ

խաղեր 57
խցիկ 46
խցիկի պարամետրեր 47

## Ծ

ծրագրակազմի թարմացում 20
ծրագրակազմի թարմացումներ 19, 22
ծրագրեր 57

## Կ

կազմաձև 31
կանչեր 32
կանչերի մատյան 34
կանչի ժամաչափ 35
կանչի հետաձգում 35
կանչի վերահասցեավորում 34
կոնտակտներ
— խմբեր 62
— պահպանվում է 61

## Հ

հաղորդագրության ուղարկելը 38
հաղորդագրության պարամետրեր 40
հաղորդագրություններ 38
հաղորդագրությունների կենտրոնի համարը 36
համատեղ օգտագործում 55
համարհավաքի դյուրանցումներ 25, 33
համացանց 54
հաշվիչ 64
հավասարիչ 54
հիմնական էկրան 15, 24
հիշապահեստ 56


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

հիշաքարտ 8
հիշողություն 49
հնչերանգներ 22, 24

## Ձ

ձայնագրանցիչ 53
ձայնային համարհավաք 33
ձայնային հրամաններ 25
ձայնի պարզություն 34
ձեռնազատ 33

## Մ

մարտկոց 7, 9
մեդիա նվագարկիչ 48, 50, 51
մուտքի արկղ, հաղորդագրություններ 38
մուտքի կոդեր 13

## Ն

նավարկման գործիքներ 60
նավարկում 16
ներլցումներ 19
նշումներ 64
նվագարկիչ 50, 51

## Շ

շտապ հաղորդագրություններ 39

## Ո

ոլորում 16
որևէ-ստեղն պատասխան 34

## Պ

պաստառ 24
պատկերներ 46, 47
պարամետրերի վերականգնումը 21
պրոֆիլներ 23

## Ռ

ռադիո 52, 53

## Ս

սպասարկման հրամաններ 30
ստեղնախմբի կողպեք 17
ստեղնակողպեք 17, 21
ստեղներ 6
ստերեո լայնացում 54

## Վ

վայրկյանաչափ 65
վերահավաքում 34

## Տ

տառաչափ 24
տեղի մատյան 30
տեսահոլովակներ 47
տեքստ մուտքագրելը 35
տեքստային ռեժիմներ 35
տեքստերի ավանդական ներմուծում 35


© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

տեքստերի կանխատեսող ներմուծում 36
տպում 49
տվյալների կաբել 28

## Ց

ցուցաստրք 14, 24
ցուցիչներ 14, 15

## Փ

փոխանցում, ֆայլեր 51
փոկ 11
փոստ 42
փոստի նախադրում 43

## Ք

Քարտեզներ 58, 59, 60

## Օ

օգնության տեքստ 22
օպերատորի ընտրացանկ 30
օֆլայն ռեժիմ 17

## Ֆ

ֆայլերի կառավարում 48

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են: 

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

CE0434

NOKIA CORPORATION-ը սույնով հայտարարում է, որ սույն RM-540 արտադրատեսակը համապատասխանում է 1999/5/EC դիրեկտիվի հիմնական պահանջներին և կիրառելի այլ դրույթների: Համապատասխանության հայտարարագրին կարելի է ծանոթանալ http://www.nokia.com/phones/declaration_of_conformity/ ինտերնետային էջում:

© 2009 Nokia Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Nokia, Nokia Connecting People, XpressRadio, XpressMusic և Navi-ն Nokia Corporation-ի ապրանքային կամ գրանցված ապրանքային նշաններն են: Nokia tune ձայնային ազդանշանը Nokia Corporation-ի ձայնային նշանն է: Սույն փաստաթղթում հիշատակվող ապրանքային կամ ֆիրմային այլ անվանումները կարող են հանդիսանալ դրանց համապատասխան սեփականատերերի ապրանքային նշանները կամ առևտրային անվանումները:

Portions of the Nokia Maps software are © 1996-2009 The FreeType Project. All rights reserved.

Արգելվում է սույն փաստաթղթի բովանդակության՝ որևէ եղանակով կատարված ամբողջական կամ մասնակի վերարտադրությունը, փոխանցումը, տարածումը կամ պահեստավորումը՝ առանց Nokia-ից նախօրոք ստացված գրավոր թույլտվության: Nokia-ն անընդհատ կատարելագործման քաղաքականություն է վարում: Nokia-ն իրավունք է վերապահում, առանց նախօրոք ծանուցելու, փոփոխություններ և բարելավումներ կատարել սույն փաստաթղթում նկարագրված որևէ արտադրանքի մեջ:

Includes RSA BSAFE cryptographic or security protocol software from RSA Security.

Java and all Java-based marks are trademarks or registered trademarks of Sun Microsystems, Inc.

Սույն արտադրանքը լիցենզավորված է MPEG-4 Visual Patent Portfolio License-ով՝ (i) MPEG-4 Visual Standard-ին համապատասխան կոդավորված տեղեկույթն անձնական և ոչ առևտրային գործունեության մեջ ներգրավված սպառողի կողմից անձնական և ոչ առևտրային նպատակով օգտագործման և (ii) լիցենզավորված մատակարարողից ստացված MPEG-4 տեսանյութերի առնչությամբ օգտագործման համար: Որևէ այլ օգտագործման համար լիցենզիա՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, չի տրամադրվում: Լրացուցիչ տեղեկություններ, ներառյալ գովազդային, ներքին և առևտրային նպատակներով օգտագործումը, կարող են ձեռք բերվել MPEG LA, LLC-ից: Տե՛ս http://www.mpegla.com:

ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՍ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ NOKIA-Ն ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԼԻՑԵՆԶԱՏՈՒՆԵՐԸ ՈՉ ՄԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ ԿՐՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱՄ ԵԿԱՄՏԻ ԿՈՐՍՏԻ, ԻՐԱԿԱՆ, ԿՈՂՄՆԱԿԻ, ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՄ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԱՅՍ ԿԱՄ ԱՅՆ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԻՆՉ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ԷԼ ՈՐ ԴՐԱՆՔ ՊԱՏՃԱՌՎԱԾ ԼԻՆԵՆ:

ՍՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է «ԻՆՉՊԵՍ ՈՐ ԿԱ»: ՍՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՃՇԳՐՏՈՒԹՅԱՆ, ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՄԻ ԵՐԱՇԽԻՔ՝ ԼԻՆԻ ԴԱ ՊՈԶԻՏԻՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ, ԹԵ՝ ԵՆԹԱԴՐՅԱԼ (ՆԵՐԱՌՅԱԼ, ԲԱՅՑ ՈՉ ՄԻԱՅՆ ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ԱՅՍ ԿԱՄ ԱՅՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԻՏԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ) ՉԻ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ, ԵԹԵ ՕՐԵՆՔՈՎ ԱՅԼ ԲԱՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՉԷ: NOKIA-Ն

ԻՐԱՎՈՒՆՔ Է ՎԵՐԱՊԱՀՈՒՄ ՑԱՆԿԱՑԱԾ ՊԱՀԻ ՓՈՓՈԽԵԼ ԱՅՍ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ԿԱՄ ՀԵՏ ԿԱՆՉԵԼ ԱՅՆ՝ ԱՌԱՆՑ ՆԱԽՕՐՈՔ ԾԱՆՈՒՑԵԼՈՒ:

Այս կամ այն արտադրատեսակի, ծրագրային ապահովման և սպասարկման ծառայությունների առկայությունը կարող է տարբերվել՝ տարածաշրջանից կախված: Լեզվային տարբերակների առկայության և մանրամասների վերաբերյալ տեղեկություն ստանալու համար դիմեք Nokia-ի Ձեր գործակալին: Սույն սարքը կարող է պարունակել նյութեր, տեխնոլոգիաներ կամ ծրագրեր, որոնց վրա տարածվում են ԱՄՆ կամ այլ երկրների արտահանման օրենքները կամ կանոնակարգերը: Օրենքը շրջանցելը կամ դրանից խուսափելն արգելված է:

## ՀԴՀ/«ԻՆԴԸՍՏՐԻ ԿԱՆԱԴԱ» ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ձեր սարքը կարող է առաջացնել հեռուստա- կամ ռադիոխանգարումներ (օրինակ, հեռախոսն ընդունիչ սարքավորման անմիջական մոտակայքում օգտագործելիս): Ինդըստրի Կանադան կամ ՀԴՀ-ն կարող են պահանջել Ձեզանից դադարեցնել հեռախոսի օգտագործումը, եթե այդ խանգարումները հնարավոր չէ վերացնել: Օգնության կարիքի դեպքում, դիմեք տեղական սպասարկման կետ: Սույն սարքը համապատասխանում է ՀԴՀ կանոնակարգի 15-րդ բաժնի պահանջներին: Սարքը շահագործելիս պետք է նկատի ունենալ հետևյալը. (1) սույն սարքը չի կարող առաջացնել վնասակար հեռահաղորդակցային խանգարումներ, և (2) սույն սարքն ընդունում է ստացված բոլոր խանգարումները, ներառյալ այնպիսիք, որոնք կարող են հանգեցնել անցանկալի գործողությունների: Որևէ փոփոխություն կամ ձևափոխում, որը կատարվել է առանց Nokia-ի ուղղակի հավանության, կարող է անվավեր դարձնել օգտագործողի կողմից սույն սարքը շահագործելու իրավունքը:

Մոդելի համարը. X3-00

/Հրատարակություն 1 HY